

ԹԻԻ 2

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ 1913-14 ՇՐՋԱՆԻ
ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵՆԷՆ ԵՏՔԸ

ՆԻՍՏ Բ.

10 Մայիս 1913



Տպագրութիւն Ռ. ՍԱԳՆԱՆ
ՀԱՂԱԹԻՍ, Գուրշոնյու Խան, թիւ 7, Կ. ՊՕԼԻՍ

1913

[illegible]

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր
Նախագահ Ազգային Ժողովոյ

Պատիւ ունեցայ ստանալ Ձեր Բարձր
Սրբազնութեան պաշտօնագիրը, որով կ'իմա-
ցնէք ինձ Ազգ. Ժողովոյ Բ. Ատենապետ
ընտրուած ըլլալս:

Հակառակ ջերմ փափաքին զոր ունիմ
ծառայելու Ազգիս, կը ցաւիմ որ ստիպուած
եմ հրաժարիլ, որովհետեւ անձնական գրա-
ղումներս և առողջական վիճակս բացարձա-
կապէս արգելք պիտի ըլլան ինձ խղճի մտք
կատարել ինձ յանձնուած կարեւոր պաշտօնը:

Ուստի կը փութամ մատուցանել հրաժա-
րականս, չնորհակալութիւնս յայանելով Ազգ.
Ժողովոյ կողմէ ինձ ցոյց տրուած վստահու-
թեան համար:

Մնամ խոնարհ ծառայ
Ձեր Բարձր Սրբազնութեան

ՀՐԱՆՏ ԱՍՍՏՈՒՐ

8 Մայիս 1913
Բանկալթի

Տ. ՀՄԱՅՆԱԿ ԵՊԻՍ. — Կարծեմ ամենքս
ալ Հ. Ասատուր էֆ. ի արժանիքը գնահատենք
և փափաքող ենք որ Ազգն ալ մեր Ժողովն
ալ օգտուի իր օրէնսդրութիւնէն և փորձա-
ռութիւնէն: Ուստի կը մերժենք իր հրաժարա-
կանը:

Ժ. ՍՍՅԱՊԱԼԵԱՆ ԷՖ. — Ես ալ համա-
ձայն եմ Սրբազանի գնահատման, բայց տե-
սակցեցայ իրեն հետ ու համոզուեցայ որ
վերջնապէս կը մերժէ. ժամավաճառութիւն
պիտի ըլլայ անով զբաղիլ:

Ս. ՆԱԽԱԳԱՀ. — Երէկ առտու մենք
ալ տեսանք զինքը և ջանացինք որ հրաժա-
րի, բայց անկարելի եղաւ:

Մ. ՆԱԽԱՆԵԱՆ ԷՖ. — Միայն 45 երեւ-
փոխաններ ներկայ ենք, մեծամասնութիւն
չունինք որ նկատի առնենք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սպասենք ուրեմն որ
մեծամասնութիւն գոյանայ, այն ատեն քուէի
կը դնենք:

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱՐԱՐՆԻՉ ԴԻԻԱՆՆԵՐՈՒ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանս կազմած է
Նախաքննիչ Դիւաններուն ցուցակը, թող
կարդացուի և Ժողովիդ քուէին ներկայենք:

(Ատենադպիր էֆ. կարդաց պատրաստուած
ցուցակը):

Ձեռնադրութեան Դիւան

Տ. Հմայեակ Արքեպ. Դիմաքսեան
Արամ էֆ. Հալաճեան
Արշակ » Ալոյսյան

Դատարարութեան Դիւան

Յակոբ էֆ. Պոյաճեան
Լեւոն » Սեդրակեան
Տօքթ. Վ. Թորգոմեան

Կալուածոց Դիւան

Վահան էֆ. Էսայեան
Պենոն » Տէյրիմէճեան
Թորգոմ » Պոյաճեան

Համարակալութեան Դիւան

Եղուարդ էֆ. Շիրինեան
Խաչիկ » Սվաճեան
Զարեհ » Խորասանճեան

Յարարերութեան Դիւան

Յարութիւն էֆ. Մոստիկեան
Նշան » Գալպէճեան
Արիստակէս » Գառպարեան

Իրաւասութեան Դիւան

Տ. Մաղաքիա Արքեպ. Օրմանեան
Դարեգին էֆ. Տէմիրճիպաշեան
Համբարձում էֆ. Պոյաճեան

Նախաձեռնութեան Դիւան

Հայկ էֆ. Խոճասարեան
Դաւիթ էֆ. Տէր-Մովսէսեան
Դէտրդ էֆ. Մեծատուրեան

Խմբագրութեան Դիւան

Վահան էֆ. Թէքէեան
Բարթոլ » Զօրեան
Երուանդ էֆ. Օտեան

ՁԱՅՆԵՐ. — Ա. Գառգարեան էֆ. Վար-
չութեան անդամէ չըլլար:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երբ ինչիւրը Վարչու-
թեանն եկած գործի մը վերաբերի՝ կրնայ
ինքը չմասնակցիլ:

ՁԱՅՆԵՐ. — Անոր տեղ ուրիշ մը նշանա-
կեցէք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը նշանակենք Բար-
սեղ էֆ. Աւետիսեանը:

(Ատենադպիր էֆ. կը չարունակէ կարդալ
Հ. Պոյաճեան էֆ. ի ընտրութեան դէմ ևս նոյն
առարկութիւնը ըլլալով՝ անոր փոխարէն կը
նշանակուի Մեղքոն էֆ. Կիւրճեան, Մոստիչ-
եան և Գալպէճեան էֆ. ներք կը հրաժարին,
բայց կը մերժուի իրենց հրաժարականը: Երբ
և Օտեան էֆ. ի անունը կը կարդացուի):

ՎԱՀ. ԹԵԲԵՆԱՆ ԷՖ. — Ես կը բողոքեմ
Օտեան էֆ. ի ընտրութեան դէմ:

Ե. ՕՏԵԱՆ ԷՖ. — Ես ալ կը բողոքեմ
արդէն մէկ տարի բաւական աշխատեցայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Կը նշանակենք Ռուբէն
էֆ. Զարգարեան:

(Ատենադպիր էֆ. կարդալով ամբողջական
ցուցակը, կը վաւերացուի Ժողովէն):

ՆՈՐ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պիտի կարդացուի
Վարչութեան տեղեկագիրը նոր երեսփոխան-
ներու ընտրութեանց մասին:

(Ատենադպիր էֆ. նախ կարդաց հետեւեալ
գիրը):

Վսեմաշուք Ատենապետ էֆ. Էնտի

Ազգ. Երեսփ. Ընդհանուր Ժողովոյ

Եւդոկիոյ վիճակէն ինչպէս նաև Մայրա-
քաղաքիս Գուգիւճուք-Իճատիէի թաղէն
պակասեալ մէկ մէկ երեսփոխաններու տեղ
ըստ հրահանգի Պատրիարքարանիս նոր ընտ-
րութիւն կատարուած և Գաւառական Ընդհ. Ժողովոյ ու ընտրողական ժողովոյ կողմէ
Ապրիլ 7 և Մայիս 7 թուականաւ ուղղեալ
տեղեկագրերով ներկայացուած է արդիւնքը
յորմէ կը տեսնուի թէ քուէներու բացարձակ
առաւելութեամբ Ազգային Երեսփոխան ըն-
տրուած են:

Եւդոկիոյ վիճակէն. Յակոբ էֆ. Պօնճուգեան
Գլ. Իճո թաղէն Կոպեռնիկ էֆ. Խաչատուրեան

Քաղաքական Ժողովս սահմանադրութեան
81ԲԴ. յօդուածին համաձայն ստուգելով
նորընտիր Երեսփոխաններու ընտրելութեան
պայմաններն ըստ ամենայնի համաձայն գը-
տաւ Սահմանադրութեան արամադրութեանց
և հետեւեալը, ընդ գրոյս Պատկ. Ժողովիդ
կը մատուցանէ ընտրական տեղեկագրերը:

Մնամք յարգանքօք

Ի Դիմաց Քաղաքական Ժողովոյ

Գեւ-Ասեմադպիր Ասեմապէս

Ա. Յ. ԳԱՍՊԱՐԵԱՆ Ս. ԳԱՐԱՆԱՆ

10 Մայիս 913

(Ժողովը ձեռամբարձ քուէով վաւերացը-
նելով կատարուած ընտրութիւնները, երես-
փոխան հռչակուեցաւ Սկիւտար-Իճատիէ
Գուգիւճուքէն ընտրուած Կոպեռնիկ էֆ.
Խաչատուրեանը և Եւդոկիայէն ընտրուած
Յակոբ էֆ. Պօնճուգեանը:

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆԻ

Ի ՄԱՍԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1906—1910 ՀԱՄԱՐԱՏՈՒԹԵԱՆՅ

ԱՏՆՆԱՊԵՏ ԷՖ.— Այժմ պիտի կարգացուի իրաւասութեան դիւանի տեղեկագիրը՝ Կրօնական Ժողովի 1906—1908 և 1908—910 համարատուութեան մասին:

Տ. ՀՄԱՅԵԱԿ ԵՊ.— Տպուած է:

ՀՄ. ԱՐԱՄԵԱՆՅ ԷՖ.— Համարատուութիւնները տպուած են. ասիկա իրաւասութեան Դիւանին տեղեկագիրն է այդ համարատուութեանց մասին:

(Ատենադպիր էֆէնտի կարգաց հետեւեալ գիրը):

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆԻ

Ի ՄԱՍԻՆ 1906—1908 և 1908—1910

ՇՐՋԱՆԻ ԿՐՕՆ. ԺՈՂՈՎՈՅ

Ազնուաշուք Ատենապետ էֆէնտի

Ազգ. Երեսփոխանական Ժողովոյ

Ազգային Ժողովոյ որոշմամբ, դիւանին նախաքննութեան յանձնուած էր, Կրօն. Ժողովոյ 1906—1908 և 1908—1910 երկամիայ չրջաններու համարատուութիւնը, որոց նկատմամբ կուգանք տեղեկագրել Պատ. Ժողովի՝ արդիւնքը մեր քննութեան:

Ինչպէս դիւրին է հասկնալ, առաջին համարատուութիւնը կը վերաբերի այն Կրօն. Ժողովին որ սահմանադրութեան հոգակումն է 2 տարի առաջ պաշտօնի կոչուած էր և սահմանադրական չրջանի մէջ դադարեցաւ պաշտօնէ, Ազգ. Ժողովէն բնորոշուած Կրօն. Ժողովին ասպարէզ տալով: Ինչպէս կ'երևայ իր համարատուութեանէն ընդհանրական չրջանին ամենէն խիստ օրերուն մէջ, այս մարմինը թէ եկեղեցական և թէ յարաբերական

խնդիրներու մէջ գնահատելի ծառայութիւն մատուցած է, փափաքելի էր միայն որ համարատուութեան կցուած համառոտագրութեան տեղ, որ անօգուտ մանրամասնութիւններ կը պարունակէ, զլիւսւոր խնդիրներու վրայ քիչ մը աւելի մանրամասն խօսուած ըլլար սպառնալի պատմութեան կարեւոր նիւթ հայթայթելու համար:

Խնդրոյ առարկայ եղած համարատուութեան կցուած է նաև ամբաստանութեանց գլուխ մը, որուն մէջ Ժողովոյ նոյն ատենի նախագահին նկատմամբ կարգ մը ամբաստանութիւններ կան: Դիտելի է սակայն որ, համարատուութիւնը ստորագրող հայրերէն մէկ քանին, Օրմանեան Ս. ի համար կազմուած Խորհրդարանական Քննիչ Յանձնաժողովոյ արդէն ներկայացած և իրենց ամբաստանութիւնները քննուելէ յետոյ, կրկին անգամ ներկայ համարատուութեան առթիւ տարրեր խնդիրներու վրայ ուրիշ ամբաստանութիւններ երևան դրած են, մինչդեռ անոնք պէտք է ներկայացուէին իր ժամանակին և այն յանձնաժողովին որ Ազգ. Ժողովէն պաշտօնունէր քննելու զանոնք:

Երբ ամէն մարմին այսպէս իր ժամանակի համարատուութեան հետ ամբաստանութիւններ ներկայացնէ, այդ պարագային հարկ կ'ըլլայ մնայուն Յանձնաժողովներ կազմել ամբաստանութեանց քննութեան համար, առանց որոշ արդիւնքի և հետեւանքի: Հետեւաբար քանի որ նախկին Պատրիարք Օրմանեան Ս. ի ամբաստանութեան խնդիրը տարիներով Ազգ. Ժողովոյ օրակարգին վրայ մնալէ յետոյ իր լուծումը ստացաւ — նոյնիսկ այցառմանով քահանայական ձեռնադրութեան կամ քահանայի մը փոխադրութեան թէ կարգադրութեան նման գուտ հոգեւոր և Կրօն. Ժողովոյ իրաւասութեան պատկանող խնդիրներն իսկ երկարօրէն խնդրոյ առարկայ ըլլալով — Դիւանս հարկ չտեսներ վերջէն բերուած այս ամբաստանութեանց անդրադառնալու և զանոնք վերստին քննելու ու է կանոնական իրաւունք ալ չգտներ:

Կ'առաջարկենք ուրիշն նոյնութեամբ բնորոշիլ և վաւերացնել 1906—908 չրջանի Կրօն. Ժողովոյ համարատուութիւնը, ի բաց տեսալ վերջին ամբաստանութեանց գլուխէն:

Այս առթիւ հարկ կը համարինք նաև

Պատկ. Ժողովի ուշադրութեան յանձնել նոյն Կրօն. Ժողովոյ համարատուութեան ամուսնալուծութեան գլուխին մէջ գտնուած հետեւեալ առաջարկը «Արժան և անհրաժեշտ կը նկատենք որ Կրօն. Ժողովը ամուսնալուծման վճիռ չարձակէ, այլ պարտաւոր լինի միայն տեղեկագիր մատուցանելու առ վեհ. Հայրապետ և սպասելու անոր վրձնոյն:»

Կրօն. Ժողովը այս եզրակացութեան հասնել է, տեսնելով որ ամուսնական և ամուսնալուծման առթիւ գեղձումներ կը պատահին և ոչ միայն Պոլիս այլ և գաւառներն ալ սկսած են ամուսնալուծումներ կատարել: Քանի որ Ազգ. Ժողովին վերաբերեալ և ազգովին ընդունուած ամուսնական դատաւարութեան և ամուսնալուծման օրէնք մը գոյութիւն չունի, ներկայիս կ'արժէ որ Ազգ. Ժողովը նկատողութեան առնէ այս առաջարկը իր բոլոր կարեւորութեամբ և իրրե վերին օրէնսդիր մարմին իր որոշումը տայ:

Գալով 1908—910ի Կրօնական Ժողովոյ՝ որ սահմանադրական առաջին Կրօն. Ժողովը եղած է, իր համարատուութիւնը կը բաժնուի քանի մը գլուխներու հետեւեալ կարգաւ Ա. Պատմական Բ համարատուութիւն խնդրոց և որոշմանց Գ. ամուսնական խնդիրներ Դ. եկեղեցական բարեկարգութիւն:

Ա. գլուխին մէջ խօսուած է Կրօն. Ժողովոյ կազմութեան, Ատանայի կատարածէն յետոյ իր տուած կրկին հրաժարականներու և անոնց մերժման պարագաներուն վրայ, Կրօն. Ժողովը իր երկամիայ չրջանին մէջ զբաղած է ընդ ամէնը 1494 խնդիրներով, որոնց 90ր իրեն փոխանցուած էր նախորդ-Կրօն. Ժողովէն, իսկ նախուած խնդիրներու թիւն է 93:

Բ. գլուխին մէջ կրօնական—կրթական, եկեղեցական—կրօնական, թաղային—եկեղեցական, ձեռնադրութեան, երաժշտական—ուսուցչական, հայ—գլխուորական, վիճակային—վարչական և ին. խնդիրներու վրայ մանրամասնութեամբ խօսուած է և վերջարանին մէջ համառօտ ակնարկ մը կայ Կաթողիկոսական և Պատրիարքական աթոռներու վրայ

Գ. գլուխը կը խօսի ամուսնական խնդիրներու վրայ, և Կրօն. Ժողովը զգալով ամուսնական դատերու և դատաւարութեանց եղանակին նկատմամբ կանոններու պէտքը,

կ'աւելցնէ թէ երկու ուրոյն յանձնաժողովներ կազմած է այդ կանոնաց պատրաստութեան համար, սակայն չէ իրագործուած, կենսական կարեւորութիւն ունեցող այդ ծրագիրներու պատրաստութիւնը Ուրեմն ազգին համար այնքան կենսական կարեւորութիւն ունեցող ամուսնական դատաւարութեան օրէնքի մը պատրաստութեան պէտքը բոլոր Կրօն. Ժողովներու կողմէ զգացուելով հանդերձ, մինչև հիմայ կարելի չէ եղած լրացնել: Թէև 1908—910ի Կրօն. Ժողովը իր համարատուութեան մէջ, Վարչութեան և Ս. Պատրիարքի հրաժարման կը վերադրէ այդ յետաձգութեամբ, բայց մենք գիտենք թէ այդ թուականէն վերջ, ինչպէս առաջ ալ ազգը ունեցած է խողալ չրջաններ, բայց չէ կրցած այդ կարեւոր գործը ի գլուխ հանել: Փափաքելի է որ այս անգամ Ազգ. Ժողովը իր օրէնսդրական իրաւասութիւնը ինք գործադրէ, քանի որ նոր Կրօն. Ժողով մ'ալ իր չրջանը կ'աւարտէ առանց այս տեսակետով ու է է նշանակելի աշխատութիւն երեսն բերելու:

Տեղեկագրին Դ. գլուխը ամէն աւելի ուշադրաւ է. նոյն չրջանի Կրօն. Ժողովը եկեղեցական-ծիսական բարեկարգութեան պէտքը զգալով, անդամներէ ոմանց առաջարկութեան վրայ, գաւառական առաջնորդներէ ալ ծրագիր և կարծիք պահանջած է և մինչ այդ տեղեկագիրներու ամբողջանալուն կ'ըսպասէր խնդիրը ներկայացնելու համար համագումար Ժողովին և անոր միջոցաւ Ամենայն Հայոց Հայրապետին, Ժողովոյ պաշտօնաւարութեան չրջանը լրացել և իր հրաժարականը մատուցել է: Չենք գիտեր թէ իրեն յաջորդող Կրօն. Ժողովը առիթ ունեցած է անդրադառնալու այս կարեւոր խնդրոյն, բայց յամենայն դէպս քանի որ Ազգ. Ժողովը իր խնդրոց կարգին մէջ ունի, Ամենայն Հայոց Հայրապետութեան մատուցանելի բաղձանքներու խնդիրը, որ Ատենապետաց Դիւանէն ալ քննուած և տեղեկագիրը բերուած է Ժողովին, կրնայ այս եկեղեցական-ծիսական բարեկարգութեան մասին ներկայացուած առաջարկները և ծրագիրներն ալ նկատողութեան առնել՝ որովհետեւ մեր եկեղեցւոյ սոցալն համեմատ արդէն չոչափուած խնդիրները իսկ եկեղեցականի մենաշնորհ չեն նկատուիր

ինչպէս եկեղեցական և աշխարհական իշխան մարմիններու խորհրդակցութեամբ յանցելուն հղած են եկեղեցական կարեւոր օրէնսդրութիւններ, ներկային մէջ ալ պատճառ չկայ որ նոյնը չպատահի: Հետեւաբար կ'առաջարկենք իւրացնել համարատուութեան այս մասը և նկատողութեան առնել Ամենայն Հայոց Հայրապետութեան մատուցանելի բողձանքներու առթիւ, որ գոնէ այս շրջանին պէտք է դրուի Ազգ. Ժողովոյ սեղանին վրայ: Սոյն համարատուութեան վերջը կը գտնենք խնդրոյ համառօտագրութիւնը, որ հակառակ իր մանրամասնութեան անթերի չէ դժբաղդաբար որովհետեւ կան կիսատ գործեր որոնք իբրեւ որոշում արձանագրուած են, պարզ յզումներ կամ ի գիտութիւն կարգացուած խնդիրներ դարձեալ իբր որոշում արձանագրուած և մէկ երկու ալ հակասական որոշումներ, ինչպէս ասեղ մը կրկնանի գործածութիւնը արգելուած, քիչ մը անդին արտօնուած, կան նաև վերջնականապէս չի կարգադրուած խնդիրներ որոնք իբր որոշում ներկայացուած են, բայց ամէն պարագայի մէջ համարատուութիւնը թէ իր սկզբունքով և թէ ներկայացուած ձևով գնահատելի աշխատութիւն մ'է և պիտի մնայ Պատրիարքարանի տարեգրութեանց մէջ իր անտակին մէջ կարեւոր գործ մը:

Դիւանոս կ'առաջարկէ վաւերացնել նաև այս համարատուութիւնը իր ամբողջութեամբ իւրացնելով անոր մէջէն բարեկարգութեան մասը:

Մնամք յարգանք

Անդամ Իրաւասութեան Դիւանի

ՏՕԲԹ. Ս. ԹԵՐԶԵԱՆ

1906է 908ի համաբաւոնութեան համար

Մ. ԵՊՍ. ՏԵՐՈՒՆԵԱՆ

Յ. Գ. Դիւանոս տեղեկաբեր կը կարգէ իր կողմէ Տր. Թէրզեան էֆ.ին:

Ժ. ՍՍՅԱՊԱԼԵԱՆ ԷՖ.— Այդ տեղեկագիրը շատ կարեւոր խնդիրներ կը շոյափէ: Պէտք է տպուի և ցրուի Ժողովին յետոյ օրակարգ անցնի, որ նկատի առնենք եղած առաջարկները:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Հարկաւ պիտի տպագրուի Ժողովիս ատենագրութեան մէջ, ինչ որ հոս կը կարգացուի, արդէն խակ կը տպագրուի:

ԲԵՐԱՅԻ ԵՐԵՍՓՈՒՍՆԵՐՈՒ
ՆԱԽՈՐԴ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Այժմ պիտի կարգացուի Վարչութեան մէկ ուրիշ պաշտօնագիրը:

(Ատենագիր էֆէնտի կարգաց հետեւեալ գիրը):

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի

Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ

Պատկառելի Ժողովիդ ամսոյս 1ի իր մատուցած ծառայութեան համար և ասկայն փակուած կը նկատէ խնդիրը:

Վ. ԹԵՐԶԵԱՆ ԷՖ.— Սակայն իրականութիւնը պէտք չէ անուշադիր անցնի: Ամբողջ թաղի մը ընտրութեան խնդրին քննութիւնն է որ ձգձգուելով, այդ թաղը զրկուած մնայ իր երեսփոխաններէն: Ժողովը դիւրին կերպով պէտք չէ անցնի ատոր վրայէն. պէտք է այնպիսի քննութիւններ շատ փութով կատարուի:

Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովը ուշադրութեան առնելով խնդիրը և նկատելով որ Ազգ. Երեսփոխաններու հինգ երկարեկան վիճակարկութեան առթիւ Բ. վիճակաւ դադրած են այս անգամ նաև Բերա-Պատրիարքարան Միացեալ Թաղերու ինն ամբողջ երեսփոխաններն, և ըստ յանձնարարութեան Պատկ. Ժողովիդ յաջորդներու ընտրութեան հրահանգներն ուղղուած են նաև նոյն թաղերուն, գիտեց թէ այս պայմաններու մէջ կատարելի քննութիւնն արդիւնքի տեսակէտով ո և է օգտակարութիւն չունի և իրական պէտք մը չի գոհացնէր և մանաւանդ վերոյիշեալ երեսփոխանական մասնակի ընտրութիւնէն ի վեր բաւական ժամանակ անցած ըլլալով, դժուարինէ՛ ընտրութեան խնդրոյ նիւթ եզոզ պարագաները

որոշապէս ճշդել, հետեւաբար կը փութայ Պատկ. Ժողովէդ խնդրել որ խնդիրը փակուած համարուի:

Մնամք յարգանք

Ի Դիմաց Քաղաքական Ժողովոյ
Դեր-Ասենագիր Ասենագիտ
Ա. Յ. ԳԱՍՊԱՐԵԱՆ Ս. ԳԱՐԱԵԱՆ
29 Մարտ 1913

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Դիտողութիւն կայ այդ մասին:

ՎԱՐԴԳԻՍ ԷՖ.— Դիտողութիւն չատկայ. բայց խնդիրը արդէն ինքնին վերջացած է, և անոնք որ խնդիրը այս վիճակին հասցուցին թող անոնք ամէնայն, եթէ ամէնալու պէտքը կը զգան:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ժողովը անշուշտ կը ցաւի այդ յապաղումին համար և ասկայն փակուած կը նկատէ խնդիրը:

Վ. ԹԵՐԶԵԱՆ ԷՖ.— Սակայն իրականութիւնը պէտք չէ անուշադիր անցնի: Ամբողջ թաղի մը ընտրութեան խնդրին քննութիւնն է որ ձգձգուելով, այդ թաղը զրկուած մնայ իր երեսփոխաններէն: Ժողովը դիւրին կերպով պէտք չէ անցնի ատոր վրայէն. պէտք է այնպիսի քննութիւններ շատ փութով կատարուի:

ՎԱՐԴԳԻՍ ԷՖ.— Ուրեմն իմ ցաւս շատ իրաւացի էր:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Արդէն ըսինք թէ Ժողովս ցաւելով այդ ձգձգումին համար, փակեալ կը նկատէ խնդիրը:

ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Քաղաքական Ժողովը իր տեղեկագիրը բերած է Ե. Շիրինեան էֆ.ի մէկ հարցման մասին:

(Ատենագիր էֆէնտի կարգաց հետեւեալ գիրը):

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի

Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ

Պատկառելի Ժողովիդ կողմէ ասկէ առաջ Քաղաքական Ժողովոյ յղուած էին ի քննութիւն և ի տեղեկագրութիւն՝ Ազգ. Երեսփոխան Եղուարդ Շիրինեան էֆէնտիի անցեալ տարուոյ Հոկտ. 12 և Դեկտ. 14 թուականաւ հարցադրելն, որոնցմով յիշեալը կը յայտնէր թէ՛ առանց Քաղաքական Ժողովի հաւանութեան և հակառակ ելմտացոյցի նախատեսութեանց՝ Պատրիարքարանի պաշտօնեաները ինքնաբերաբար նուէրի գումարներ քաշած են Կեզը, Մնտուկէն, ինչպէս նաև զանազան անուններու տակ՝ անվաւեր թոշակի յաւելու մներ ստացած են և կը հարցնէր թէ՛ Քաղաքական Ժողովը ունի՞ այս մասին ո և է ծանօթութիւն և քննութիւն կատարած ու լարդիւնք մը ձեռք բերած է:

Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովը կատարելով այս մասին հարկ եղած քննութիւնն, արդիւնքէն վերահասու եղաւ թէ՛ յարգելի Երեսփոխանին հարցման նիւթ եզոզ ելմտական գործողութիւնները տեղի ունեցած են նախորդ Վարչութեան օրով և նոյն խակ ա'յն Տնտեսական Խորհրդոյ պաշտօնավարութեան ընթացքին, որու անդամակցած և ատենապետած է նոյնինքն Շիրինեան Եղուարդ էֆէնտի:

Քաղաքական Ժողովը տեղեկաբեր կարգած է իր կողմէ՛ Ժողովականներէն Տօքթ. Փաշաեան էֆէնտին՝ խնդրոյն նկատմամբ կատարուած քննութեան արդիւնքն հաղորդելու համար ի պատասխանի՝ յատենի Պատկ. Ժողովիդ:

Մնամք յարգանք

Ի Դիմաց Քաղաքական Ժողովոյ
Դեր-Ասենագիր Ասենագիտ
Ա. Յ. ԳԱՍՊԱՐԵԱՆ Ս. ԳԱՐԱԵԱՆ
29 Մարտ 1913

Մ. ՀՍԳԱՋՆ ԷՖ.— Շիրինեան էֆէնտի ներկայ չէ, յետաձգենք որ ան ալ ներկայ ըլլայ և պատասխանէ:

Ժ. ՍՍՅԱՊԱԼԵԱՆ ԷՖ.— Չէ կարելի յետաձգել ատանկ կարեւոր խնդիր մը, կարեւոր

ի է Շիրինեան էֆ. ամբիսերով ժողովին չի գայ. ինչպէս յետաձգենք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Ժողովին որոշման կը ձգեմ ուրեմն, Շիրինեան էֆ. ի ներկայութեան պահենք խնդիրը, թէ անմիջապէս նկատի առնենք:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ.— Հարկ չկայ յետաձգելու: Այդ բաները եղած են նախորդ վարչութեան օրով՝ բայց մեզի համար վարչութեան այս կամ այն շրջանը նշանակութիւն չունի: Սակայն բան մը եղած է ինչ պէտք է ընել: Շիրինեան էֆ. կ'ըսէ զեղծումներ եղած են. հակառակութիւն մը կամ թերութիւն մը երբ կ'ըլլայ, և ներկայ վարչութիւնը եղած է կ'ըսէ, կամ պարտաւանայ քուէ պէտքէ տալ և կամ ըսողը ետ պէտք է առնէ խօսքը: Ժողովը թող որոշէ նախ թէ պէտք է սպասել Շիրինեան էֆ. ի ներկայութեան:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Պէտք կա՞յ սպասել:

Մ. ՀԱՅԿԱԶՆ ԷՖ.— Շիրինեան էֆէնտի պէտք է ներկայ ըլլայ որ ինքզինքը պաշտպանէ, որովհետեւ այժմ ինքն է ամբաստանալը:

ԶՍԵՆԵՐ.— Վարչութիւնը թող տայ իր բացատրութիւնները:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Այս գրութիւնը վարչութեան կողմէ է արդէն, բայց եթէ նոր բացատրութիւններ ունի թող տայ:

ՏՕՔԹ. ՓԱՇԱՆԱՆ ԷՖ.— Ազգային երեսփոխան և նախորդ Տնտեսական Խորհրդոյ ատենապետ երուանդ էֆ. Շիրինեան 14 Սեպտ. և 12 հոկտ. 1912ին հետեւեալ հարցումը ուղղած էր՝

«Առանց Քաղ. Ժողովի հաւանութեան ու վաւերացման, և հակառակ պատկառելի Ժողովի դատուցումը Պատրիարքարանի կեդրոնական Մատակի պիւտճէին նախատեսութեանց՝ Պատրիարքարանի պաշտօնակոչները ինքնաբերաբար, (իբր թէ որոշուած) նուէրի գումարներ քաշած են կեդրոնական Մատակէն, և զանազան անուններու տակ, անվաւեր ամսաթուղթի յաւելումներ կ'ստա-

նան: Կը հարցնեմ Քաղ. Ժողովին թէ՛ այս մասին ինք ու է ծանօթութիւն ունի՞, քրն-նութիւններ կատարած է՞, և ինչ արդիւնքներ ձեռք բերած»:

Քաղաքական Ժողովս այս հարցումին վրայ քննութեան ձեռնարկելով, դժբաղդաբար հաստատեց Շիրինեան էֆ. ի ամբաստանութիւնները, Պատրիարքարանի պաշտօնէից ամսաթուղթակներու ապօրինի յաւելման և նուէրներու բաշխման մասին:

Սակայն այս հակաօրինական յաւելումները և նուէրները սեղի ունեցած են, մեր պաշտօնի կոչուելէն չառ առաջ, նախորդ Քաղ. Ժողովին օրով, մանաւանդ, թոշակի յաւելումները ամբողջովին, հակառակ նախորդ Քաղ. Ժողովի մերժումներուն, կատարուած են նախորդ Տնտեսական Խորհրդի օրով, որուն Ատենապետն էր հարցումը ուղղող Եղուարդ էֆ. Շիրինեան: Ներկայ Քաղ. Ժողովս իր պաշտօնավարութեան սկսած օրէն (1912 հոկտ.) պաշտօնեաներու կողմէ թոշակի յաւելման խնդիրները միշտ մերժած է և վերապահած վերակազմութեան:

Ապօրինի և անվաւեր յաւելումներու և նուէրներու մէջ իրենց պատասխանատուութեան բաժինը ունին՝ նախ՝ Սրբազան Պատրիարք Հայրը, երկրորդ՝ նախորդ Տնտեսական Խորհուրդը և երրորդ՝ նախորդ Քաղ. Ժողովը. իւրաքանչիւրը առանձին:

Ա. — Սրբազան Պատրիարքին պատասխանատուութիւնը կը կայանայ հետեւեալ խնդիրներուն մէջ:

1. — Տնտեսական Խորհրդի քարտուղար Յակոբ Նորհատ էֆ. 1912 մայիս 17 խնդրադիրով մը փոխարինութիւն կը պահանջէ, նպատակը Մատակարարութեան մէջ իր բացառիկ աշխատութեան համար:

Քաղ. Ժողովը այդ մասին Տնտեսական Խորհրդի վկայութիւնները սկզբունքով նկատի առնելով, վարձատրութեան արժանի կը դառնէ, բայց նախ քան իր վերջնական որոշումը, կուգէ Տնտեսական Խորհրդին կարծիքը առնել, վարձատրութեան քանակին և Պուտճէի օր գլխէն տրուելու մասին:

Տնտեսական Խորհուրդը 2000 զրշ. ի նուէր մը կը սահմանէ, Պիւտճէի Նպաստ եւ Նուէր գլխէն վճարելու պայմանաւ:

Տնտեսական Խորհրդի այս որոշումը, առանց Քաղ. Ժողովէն ըստ օրինի իր վերջնական վաւերացումը ստանալը, Ս. Պատրիարք Հայր կողմէ գործադրութեան կը դրուի: Այս խնդրոյն մէջ, Ս. Պատրիարք Հայրը միայն օրինական ձեւակերպութիւնը չէ լրացուցած:

2. — Առանց Քաղ. Ժողովի որոշման, Ս. Պատրիարք Հայրը Գործակատար էֆէնտին 500 զրշ. ի նուէր մը յատկացուցած է:

Բ. — Քաղաքական Ժողովին պատասխանատուութիւնը:

1. — Քաղ. Ժողովը նախորդ Պատրիարքական փոխտոմարդ Ղեւոնդ Վրդ. Դուրեանի բարեւոյ ծառայութիւնը գնահատելով, կորուշէ 6000 զրշ. միանուագ բացառիկ նուէր մը տալ: Իր անդամներէն Ոսկան էֆ. Մարտիկեան այս որոշումը լրացրաց մէջ կարդալով, իսկոյն կը բողբէ, հետեւեալ երկու օրինաւոր պատճառները մատնանշելով. Առաջին՝ Դուրեան Ղեւոնդ Վրդ. պաշտօնանկ եղած ըլլալով, անոր վարձատրութիւն մը նշանակուիլը հակասական է. երկրորդ՝ եթէ երբեք այդ որոշումը հակասական ալ չըլլար, պէտք էր որ Ազգ. Ընդհ. Ժողովէն վարկ տառնալէ յետոյ գործադրուէր:

Քաղ. Ժողովը Ոսկան էֆ. Մարտիկեանի այս նկատողութիւնը բանաւոր գտնելով, իր 1912 Մայիս 4ի նստին մէջ կ'որոշէ վարձատրութեան գործադրութիւնը յետաձգել և սպասել Ազգ. Ժողովին կողմէ արուելիք որոշման: Սակայն առանց այս որոշման սպասելու, Քաղ. Ժողովը իր 1912 Մայիս 25ի նստին, հակառակ իր նախորդ որոշման, Ղեւոնդ վրդ. ին 6000 զրշ. վճարել կուտայ Ազգ. Կեդր. Մատակէն, պատասխանատուութիւնը իր վրայ առնելով:

2. — Քաղ. Ժողովը պիւտճէին մէջ բարապան հանգուցեալ Կարապետ աղա Սրապեանի այրին ամսական 100 զրշ. ի նպաստ մը կը յատկացնէ: Բայց յետոյ, Տնտեսական Խորհուրդի 1912 Օգոստոս 4 յայտադրին վրայ, կ'որոշէ յիշեալ այրին միանուագ 3000 զրշ. ի նպաստ մը վճարել, պիւտճէին մէջ չը նախատեսուած այս գումարի մասին առանց նոյնիսկ Օրէնսդիր Ժողովին անգեկութիւնը հաղորդելու:

Գ. — Տնտեսական Խորհրդին պատասխա-

նատուութիւնը թոշակի ապօրինի յաւելումներու մասին:

Առանց Քաղ. Ժողովի հաւանութեան, Շիրինեան էֆէնտի ատենապետած Տնտեսական Խորհուրդը հետեւեալ թոշակի յաւելումները ըրած է՝

1. — Տնտեսական Խորհրդի Քարտ. Նորհատ էֆէնտի 300 զրշ.
 2. — Համարակալ Յարեթ էֆ. Հայրապետեանի 200 զրշ.
 3. — Օգնական համարակալ Կարապետ էֆէնտի 200 զրշ.
 4. — Գանձապետ Նշան էֆ. ի 200 »
 5. — Սզգահամարի Դիւանէն Տիգրան էֆէնտի 200 զրշ.
 6. — » » Գասպար էֆէնտի 200 զրշ.
 7. — Արձանագրութեան Դիւանէն Արմենակ էֆէնտի 100 զրշ.
 8. — Արձանագրութեան Դիւանէն Սիմոն էֆէնտի 100 զրշ.
 9. — Վարչութեան քարտուղար Նաշիտ էֆէնտի 100 զրշ.
 10. — Տնտեսական Խորհուրդը չը բաւականանալով Նորհատ և Յարեթ էֆ. ներքին թոշակներուն 300 և 200 զրշ. յաւելումներով, անոնց պաշտօն կը յանձնէ նաև թաղական Խորհրդարանները և Մատակարար Մարմնոց և ընկերութիւններու կեդրոնատեղիները այցելելով քննել անոնց մատակարարական գործերը և այս առթիւ անոնք կ'ստանան յաւելուածական ամսականներ պիւտճէին զանազանաց և յարաբերական գլուխներէն:
- Այս տառնեալ քմածին յաւելումները բընականաբար Քաղ. Ժողովին կողմէ մերժուած են, զիսկ արուելով թէ՛ օրինաւորութիւնը կը պահանջէ այսպիսի անօրինութիւն ընկուհամար՝ կանխաւ Քաղ. Ժողովի որոշումը ստանալ, և թէ այս էական պայմանը չը գործադրուելուն համար, Ժողովը չէ կրցած հաւանիլ եղած կարգադրութեանց: Թէ՛ ըստ կիււմարացոյցի օրինաց՝ երբ որ եւ է չըջանի պիւտճէն վաւերացեալ չէ օրէնսդիր իշխանութիւնէն, գործադիր մարմինը վերջին վաւերացեալ պիւտճէով միայն կրնայ գործել, և պաշտօնի մը ջնջումով կամ բաց մնալովը գոյացած խնայողութիւնները չեն կարող ուրիշ պաշտօնեաներու ամսաթուղթները աւել-

ցնելու ծառայի, առանց օրինական արտոնութեան, որ խորհրդարանէն կը արուի միայն:

Սակայն Տնտեսական Խորհուրդը, Շիրինեան էֆ. ի Ատենայեանութեան օրով, առանց նկատողութեան առնելու Քաղ. Ժողովին այս օրինաւոր դիտողութիւնները, միապետօրէն կը գործադրէ իր որոշումները: Հետեւաբար, Շիրինեան էֆ. իր հարցումներուն պատասխանը ինքը առեւած կ'ըլլայ իր գործերով և գործելակերպով, եթէ ինքը անդրադառնար իր այդ արարքներուն վրայ, ապահովարար այդ հարցումները չը պիտի ուզուէր, որովհետեւ ինքը ինքզինքը կը դատապարտէ: Շիրինեան էֆ. երկու ես ունի, մէկ եսը միւս եսը կը քննադատէ, այսինքն իր ըրածը ինքը կ'այսպէս:

Այժմ Պատկառելի Ժողովիդ կը մնայ իր հեղինակաւոր վճիռը տալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Յանուն Վարչութեան արուած բացատրութիւնները լսեցիք: Ինչպէս կ'երևայ արուած տեղեկութիւններէն, այս անկանոնութիւնները յառաջ եկած են զլիսաւորաբար պատրիարքարանի պիւտճէին կողմէ քննուած չըլլալէն: Բայց կը տեսնուի թէ անցեալին փորձերը մեզի խթան ալ չեն ըլլար, որովհետեւ ահաւասիկ մայիս ամիսն ալ սկսած է և մենք տակաւին ներկայ տարւոյ պիւտճէի մասին բան մը չկրցանք ընել: Այժմ դառնալով այս խնդրոյն, քանի որ Ժողովդ որոշեց ի բացակայութեան Շիրինեան էֆ. ի իր նկատողութիւնները ընել, ուրեմն խօսքը Հայկազն էֆ. ինն է:

Մ. ՀԱՅԿԱԶՆ ԷՖ. — Կարդալով չանցնինք, խնդիրը ըստ բաւականին ծանր է. կարգ մը կարդալովութիւններ եղած են ուստի Շիրինեան էֆ. հոս պէտք է ըլլայ և գիտնանք թէ իր ատենապետութեամբ Տնտեսական Խորհուրդը ըրած է թէ ինքնիրեն: Վարչութիւնն ալ Պատրիարքն ալ ըրած են եղեր: Խոստովանական միջոց չկայ: Պէտք է վերջ մը տալ առնեց: Ժողովուրդին մէջ շատ մը խօսուածքներ կան այդ մասին, մեր մէջ ալ այդ բաներուն վրայ կը խօսուին և կ'անցուին. վճռական որոշում մը տանք: Մինակ դիտողութիւն մը ընեմ: Տօքթ. Փաշաեան էֆ. յիշեց թէ Դուրեան վրդ ին 6000 դր, արը-

ուած է առանց արտոնութեան, որքան կը յիշեմ այս Ժողովի որոշեց տալ:

Ժ. ՍԱՅԱՊԱԼԵԱՆ ԷՖ. — (Բնովիջելով). Դրամը արուելէ ետք՝ խնդիրը հոս բերուեցաւ:

Մ. ՀԱՅԿԱԶՆ ԷՖ. (Շարունակելով). — Պէտք է խօսք հասկցնել Վարչութեան թէ իրենք են պատասխանատու. անշուշտ նախորդին ատեն եղած են ասոնք: Մենք Վարչութիւնը միայն կը ճանչնանք հոս, ան պէտք ըլլայ հոս պատասխանատու լուրը գործերուն, մինչդեռ անոնի չէ դժբախտաբար, ոչ պակաս Շիրինեաններ կան որ անկախ կը գործեն: Վարչութիւնը ինք ձեռք պէտք է առնէ գործերուն զեկը միայն և միայն ինք:

Ս. ԲԻԻՐՍԱՏ ԷՖ. — Ես կը կարծեմ որ Ժողովը չորհարկաւորութիւն պէտք է յայտնէ Շիրինեան էֆ. ի որ առիթը տեղեկեց ճանչնալով թէ իր ատեն ինչեք եղած են: Ժողովը միանգամ եթէ որոշում առեւած է յաւելումներ ընել և եթէ օրինաւոր են այդ յաւելումները, արդէն Շիրինեան էֆ. ի հարցումները ինքնին կը չըլլան: Իսկ եթէ ապօրինի եղած են ասոնք, այն ատեն Շիրինեան էֆ. ինքն իր վճարիկ տալու է. ինքն է որ աւելցնել տուած է, իբր ատենապետ այն ատենի Տնտեսական Խորհուրդին: Միայն պաշտօնականութեան անկանոնութեան յաւելումը չէ: Տակաւին շատ մը կենսական շահեր ունեցող գործողութիւններու մէջ իր դերը պէտք է ճշդեկ, կարգ մը հաշիւներ, օրինակ խանութ գնում և այլն: Խնդիրը յետաձգել պէտք է և զինքը քննութեան ենթարկել:

Դ. ՏԵՐ ՄՈՎՍԵՍԵԱՆ ԷՖ. — Վարչութեան տուած բացատրութեան նախարանին վրայ խօսելէ առաջ՝ դիտողութիւն մը ունիմ իր վերջաբանին վրայ: Վարչութեան տեղեկարարը իր վերջաբանին մէջ լրջութեամբ կորսնցուց. երկու ես ունի ըսելը չի վայել, Շիրինեան էֆ. հարցում մը բերած էր. այս Ժողովը զայն Վարչութեան յղեց. այժմ Վարչութիւնը հաստատեց որ գոյութիւն ունին այդ զեկումները: Այս համարառու Ժողովը երբ Պիւտճէ մը գործադրութեան կը յանձնէ

պէտք է յետաձգուի ըլլայ իմանալով թէ ո՞ր աստիճան խզճմութեամբ կը գործադրուի այն, եթէ ո՛չ ինչո՞ւ պիւտճէ կը վաւերացընենք. չենք կրնար անտեսել այդ կարեւոր պարագան: Ճիշտ է Շիրինեան էֆ. նախորդ Տնտեսական Խորհուրդի ատենապետ եղած է, տակաւին ատիկա չի բաւեր որ Վարչութիւնը իբր փաստ բերէ, թէ և իրաւունք ունի բերելու: Բայց Վարչութիւնը մի առ մի պէտք է ըսեր, Տնտեսական Խորհուրդի այսինչ նիստին մէջ՝ իր համաձայնութեամբ և ստորագրութեամբ արուած են այդ որոշումները. հիմա այդ կէտն ալ չըսած Վարչութեան կողմէ արուած այդ գոյնը քննադատելի կը ներկայանա: Խնդրոյն մասին եղած այս առարկութիւններէն կը հետեւցնեմ որ, ըստ ներքին կանոնադրի՝ խնդիրը Համարակալութեան Դիւանին զրկելու է որ Վարչութեան համախորհուրդ քննէ, մեզի լուսաբանութիւնն ալ և մենք որոշենք թէ՛ այն Վարչութիւնները որ Պիւտճէն այս կերպով կը գործադրեն՝ ինչ պատիւ պէտք է տաւան, թէ՛ այն Տնտեսական Խորհուրդները որոնք ինքնիրեն ծախսեր կ'ընեն՝ ինչ պատիւ պէտք է ընդունին. և թէ՛ ապագային ալ ինչ ընել որ Վարչութիւններ այսուհետեւ չփորձեն իրենց ուզած յաւելումները ընելու և առանց պիւտճէի չկառավարեն Պատրիարքարանը: Ահա Վարչութիւնը խոստացաւ Մարտ 30ին պիւտճէն Ժողովի բերել. Մայիսը անցնելու վրայ է դեռ չէ բերած, ուրեմն նախկինը կը շարունակէ՝ իրենք չեն կրնար այսպէս շարունակուիլ: Խնդիրը խնդիրը Համարակալութեան Դիւանին որ առանց յապաղման իր կարծիքը բերէ:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ. — Հիմայ այս խնդրին մէջ նկատելի կ'է մը, պարագայ մը կայ թէ՛ եղած այդ յաւելումները կը շարունակուին արդեօք: Եթէ ներկայ Վարչութիւնը ընդունած է և կը շարունակէ գործադրել, արդէն Զեք աֆօմբլի առջև կը գտնուինք. իսկ եթէ քաջութեամբ ունեցած է մերժել, ըսել է խնդիրը վերջացած է: Ուրեմն եթէ ներկայ Վարչութիւնը կը շարունակէ այդ յաւելումները ճար չկայ: Հայկազն էֆ. ըսաւ թէ Դուրեան վրդ ին արը-

է այդ. նամակ մը եկած է հոս, սակայն 1-2 չարաթ Մայր Դիւանին քով մնաց, յետոյ առանց Ժողովին դրուելու, Վարչութիւնը ետ առաւ զայն և գործադրեց:

Տ. ԵԶՆԻԿ ՎՐԴ. ՊԱՊՆԵԱՆ. — Յայտնի եղաւ որ Խորհուրդներէն մէկը դրական զեկումներ գործած է: Քանի որ աւելցուցին որ Վարչութիւնն է պատասխանատու: Թող ներուի ինձ ըսել որ այս օրէնդիր Պատկառելի Ժողովն ալ իր պատասխանատուութեան բաժինն ունի: Վարչութեան շատ մը տեղեկագիրներ հոս եկած և նկատի չեն առնուած լայց ամէն պարագայի մէջ իր օրինական պարտականութիւնն էր չի թողուլ որ այսպիսի թերութիւններ գործադրուին:

ԶԱՅՆԵՐ. — Բաւական է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ամէնքս ալ համակործիր ենք ատոր, և ցաւ կը յայտնենք եղած, ինչ: Ակնարկ մը եղաւ Համարակալութեան Դիւանին զրկելու խնդիրը: Խնդիրը զայն առնոր որ իր տեղեկագիրը բերէ Ժողովիս:

Բ. ԱՏԵՆԱՊԵՏԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻՆ

ԲՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆԸ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովը իր մեծամասնութիւնը գտած է արդէն, այժմ կրնանք քուէի դնել Հրանտ էֆ. Ասատուրի հրաժարականը՝ Բ. Ատենապետութենէ:

Տ. ՀՄԱՅԵԱՆ ԵՊ. — Ս. Պատրիարք Հայրը և Սայապալեան էֆ. ըսին որ տեսակցած են իրեն հետ և անկարելի եղած է համոզել զայն: Ես ալ հանդիպեցայ իրեն. իրեն առարկութիւնն է թէ մերժելուն ամենէն աւելի պատճառը այն է որ կառավարական պաշտօնայ է: Հետեւաբար խնդիրը գործնականապէս լուծելու համար պէտք է հրաման առնել կառավարութենէն:

ԶԱՅՆԵՐ. — Ո՛չ, ո՛չ, այդ խնդիրը յուրեւեւ ատենը չէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սրբազան Հայրը թող թողարկէ ինձ դիմել տալ թէ, ասկէ առաջ հոս պաշտօնավարած են պետական բարձրագոյն պաշտօնականներ և կառավարութիւնը ու և է դիտողութիւն չէ բրած:

Ժ. ՍԱՅԱՊԱՆԵԱՆ ԷՖ. — Ես ալ լսեցի առարկութիւնը, սակայն ատիկա չառաքալ իրողութեան համապատասխան չէ: Ան գլխաւորապէս առողջական պատճառներով կը հրաժարի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն Հրանտ Էֆ. Ասատուրի հրաժարականը իբր պարզ հրաժարական քուէի կը դնեմ:

(1ի դէմ 43 քուէով ընդունուեցաւ Հրանտ Էֆ. Ասատուրի հրաժարականը Բ. Ա. տեղապետութենէ):

ԶԱՅՆԵՐ. — Ասով Տօքթ. Տաղաւարեան Էֆ. Բ. Ատենապետ կը հաշակուի. կը չորհաւորենք: Այժմ կ'առաջարկենք Գ. Ատենապետի ընտրութիւն կատարել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այսօր չառաքալ կարեւոր խնդիրներ ունինք, յետագային առաջիկայ նիստին:

ՎԱՐԴԳԵՍ ԷՖ. — Արդէն անհրաժեշտ ալ չէ. երկու ատենապետներ կան արդէն:

Մ. ՀԱՅԿԱՋՆ ԷՖ. — Իսկ գործնականին մէջ մէկը կայ միայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն կ'անցնինք Օրակարգին:

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Յ. ՊԱՆՈՒ ԷՖ. — Ասկէ աւելի կարեւոր է նախ լսել Վարչութիւնը յարաբերական խնդիրներու համար:

ԶԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛:

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. — Մենք այդ մասին մեր տեղեկագիրները յանձնած ենք Գիւտնին:

Հ. ԱՐԱՄԵԱՆՅ ԷՖ. — Վարչութեան դիրքէն իսկ յայտնի է որ ան թիւրիմացութեան մէջ է: Խնդիրը Երուսաղէմի վրայ չէ, այլ կառավարութեան հետ յարաբերական հարցերու. կանխաւ համաձայնութիւն գոյացած էր որ այսօր Վարչութիւնը իր բացատրութիւնները տար:

ՀԱՅԿ ԽՈՃԱՍՍՐԵԱՆ ԷՖ. — Տեսնենք Վարչութիւնը կը փախարի՞ այսօր տալ իր իր բացատրութիւնները:

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. — Նիստը բացառիկ պէտք է ըլլար և դանդաղ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նիստը կը յայտարարենք դանդաղ: Ունեցողիները թող հաճին մեկնել:

(Ունեցողիները մեկնեցան, բացի մամուլի ներկայացուցիչներէն և 15 վայրկեան դադարէ ետք, ժամը 4.10ին նիստը վերադադարեցաւ դանդաղ):

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենան վերաբացուած է: Խօսքը կուտանք Վարչութեան:

Ա. ԳԱՐԱՆԵԱՆ ԷՖ. (Վարչութեան կողմէ). — Վարչութիւնը որոշած էր որ այսօր Ազգային Ժողովին կարգար իր տեղեկագիրը Յիշատակագրի մասին, իսկ եղբակացութիւնը թողուլ յաջորդ նիստին, բայց խմբակցութեան ներկայացուցիչներուն հետ կարծեաց փոխանակութենէ մը ետք՝ յարմար տեսնուեցաւ որ յաջորդ ուրբաթ օրուան ձգենք ամէնը մէկտեղ: Այսօրուանը թերի կ'ըլլար, միայն տեղեկագիրը պիտի կարդայինք, իսկ եղբակացութիւններ և այդ մասին Ժողովի որոշումը պիտի մնար յաջորդ ուրբաթ: Խմբակցութեան ներկայացուցիչներու հետ մենք ալ չառաքալ լաւ նկատեցինք որ ամբողջը մէկէն յաջորդին ձգենք:

Վ. ԹԵՔԷՆԵԱՆ ԷՖ. — Բնականաբար խօսիլ չուզող Վարչութիւնը չենք կրնար ստիպել որ խօսի: Ես ալ իբր անդամ Խորհրդաբանական Յանձնաժողովի կը սպասէի այդ համարադրութեան՝ Վարչութեան գործունէութեան մասին գաղափար կազմելու հա-

մար և ըստ այնմ ալ պատրաստուած էի: Մինչև այսօր Վարչութիւնը պէտք է պատրաստ ըլլար և իր կարծիքը յայտնէր: Կային բաներ որոնց մասին Ապահովութեան Յանձնաժողովը տեղեկութիւն ունէր և պիտի տար: Կը թուէի թէ պարագայները անհրաժեշտ կը դարձնեն այդ նոր յետաձգումն ալ: Կարծեմ Ժողովը ալ ինչի հետ համաձայն է որ համակերպինք Վարչութեան այս նոր պահանջին ալ, բայց պայմանով որ յաջորդ ուրբաթ անպատճառ տեղի ունենայ համարադրութիւնը որովհետև զանազան տարաձայնութիւններ կան որոնք մով հանգամանքով կը ներկայացնեն խնդիրը: Ուրեմն ընդունինք Վարչութեան առաջարկութիւնը:

Ա. ԳԱՐԱՆԵԱՆ ԷՖ. — Վարչութիւնը վստահ է իր բուն իրաւունքները վրայ: Ամէն անգամ երբ բանի մը յանձնառու կ'ըլլայ՝ կը կատարէ: Մեր նպատակը այն է որ տեղեկագիրը, եղբակացութիւններ և ազգային բաները ընթացքին միեւնոյն նիստի մէջ նկատի առնուին. յաջորդ ուրբաթ դանդաղ նիստի մէջ կրնանք տալ այդ բացատրութիւնը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն յաջորդ ուրբաթի դանդաղ նիստին կը յետաձգենք այդ խնդիրը և նիստը վերստին դանդաղ ընելով կ'անցնինք Երուսաղէմի խնդիրն:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԽՆԴԻՐԸ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պիտի կարդացուի Վարչութեան մէկ տեղեկագիրը՝ որ կը վերաբերի Երուսաղէմի Եպարքարական ընտրութեան խնդրին:

(Ատենապետի Էֆէնտի կարգաց այդ տեղեկագիրը որ կցուած է սոյն ատենագրութեան):

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հեռագիրը ստորագրողը Պարզեւ Էֆ. Փափաղեան հոս է, եթէ կ'ուզէք լսել զինքը:

Վ. ԹԵՔԷՆԵԱՆ ԷՖ. — Դիւանը իրաւունք ունի ինքը առաջարկելու: Վարչութեան կար-

գաղութեամբ է որ Փափաղեան Էֆ. գացած է, անոր կը պատկանի անկէ հաշիւ պահանջել, մենք եթէ պէտք չգտնենք, այն ատեն կը հրաւիրենք զայն խօսելու:

Հ. ԽՈՍՐՈՎԵԱՆ ԷՖ. — Թող ան լուսարանէ մեզ խնդրի մասին, վկան ինքն է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վարչութեան տեղեկագիրն ընթերցումէն ետք, իբր ամբողջացուցիչ տեղեկութիւն կրնանք թող տալ որ ան խօսի: Բայց հիմա Ժողովը տէրն է խնդրին:

Ա. ԱԼՊՈՅ ԺԱՆՆ ԷՖ. — Օրինական դիտողութիւն մը ունիմ: Այդ տեղեկագիրն մասին լրացուցիչ բացատրութիւններ պէտք են, բայց այս գործը Վարչութեան կը վերաբերի, որ մէկը զրկել է: Պարզեւ Էֆ. Փափաղեան խօսք չունի: Անոր գործունէութեան մասին Վարչութիւնը թող բացատրութիւններ տայ: Վարչութիւնը թող պարզաբանէ թէ ինչ պիտի ընէ ասկէ ետք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ծառ օրինական է, Վարչութիւնը ունի՞ ըսելիք:

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. — Նախ կ'ուզենք Ժողովը ըսել:

Հ. ԽՈՍՐՈՎԵԱՆ ԷՖ. — Փափաղեան Էֆ. վկայ գտնուել է զէպքերուն, թող ինք բացատրութիւններ տայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վարչութիւնը կ'ընդունի՞ որ Պարզեւ Էֆ. ին լսենք:

Մ. ՀԱՅԿԱՋՆ ԷՖ. — Ինչո՞ւ համար լուսարան չենք, Վարչութիւնը ըսաւ որ կ'ուզէ որ Պարզեւ Էֆ. ին լսենք:

ՎԱՐԳԵՍ ԷՖ. — Իբրեւ է որ հարցը Վարչութիւնը բերաւ: Բայց Խնդիրները թէ Վարչութիւնը իրաւունք ունենալով հանդերձ ու է պատուիրակ զրկելու՝ ինքը չէ խրկած այլ Պարզեւ Էֆ. իբր երեսփոխան հոս գրաւուած է ահմատես է, քանի որ այս տեղ է, ինչու ատիկը փոխանները աւելի մանրամասնութիւններ լսելու: Մէկ քանի երեսփո-

խաններ խնդրեցին որ խօսի, ասոր հակառակելու պատճառ չեմ տեսներ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Պիտի խօսի իր կարգին:

Դ. ՏԵՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ ԷՖ.— Հոս տեղեկագիր մը կարգացուցաւ: Վարչութիւնը քայլեր առած է. մարդ զրկած է հոն, Միաբանութիւնը բմբուսացիք է. հեռագիրներ փոխանակուել են: Նախ պէտք է հարցնենք Վարչութեան, ինչու պատուիրակի զրկեց: Իրեն յանձնուած պաշտօնին ընդմիջ ինչ էր. այս ժողովին կողմէ որոշուած կարգադրութեանց համաձայն էր այդ...

Հ. ԽՈՍՐՈՎԵԱՆ ԷՖ. (Ընդմիջելով).— Խնդրին խորը կը մտնայ կոր:

Ա. ԱԼՊԵՍԱՃԵԱՆ ԷՖ.— Խնդրը ասոր վրայ է արդէն:

Դ. ՏԵՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ ԷՖ. (Շարունակելով).— Ես էի առաջարկողը որ ստիպենք Վարչութիւնը քօնթրօլ հաստատուելու, բայց Վարչութիւնը փոխուած էր, նոր Վարչութիւնը ինչ կարծիք ունի հարցուցի, ան ալ թույլ չէր տալ որ ստուգուէր և բերէ իր կարծիքը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Բերած է:

Դ. ՏԵՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ ԷՖ. Այդ կարծիքը նոր զեպքերու տեղեկագիր մըն է, որուն մէջ կ'երևայ որ ժողովէս իրեն յանձնարարուած գործերը չէ ըրած: Եթէ տեղեկագիրն մէջինները ճիշտ են, ուրեմն պատգամաւորը լսելու պէտք չունինք: Ինքը թող լուսարանէ թէ ինչպէս յանձնարարուած է որ նոր ընտրութիւն կատարէ, ինչպէս միաբանութիւնը մերժեր է, ինչպէս հարկ տեսեր է պատուիրակի զրկել: Այս կէտերը քննադատելի են և այս ժողովէն ելած յանձնարարութիւններու համաձայն չեն: Թող Վարչութիւնը ինքը բացատրէ, մեզի հասկցնէ:

Յ. ՇԱՀԻԿԵԱՆ ԷՖ.— Ես բոլոր կրեւ-փախմաններէ կը խնդրեմ որ իրենց վրդովանքը մի բոլոր մի կողմ թողնեն: Կը խնդրեմ

որ մի կողմ թողնեն այն կատարածը կամ մեծապիւթիւնը թէ՛ Վարչութիւնը փոխել է մեր որոշումը: Խմբակցութեանց ներկայացուցիչներու ժողովի մէջ այս խնդրին ալ նկատի է առնուել: Իմ կարծիքը բոլորիդ էլ յայտնի է: Ինչ կ'ուզէք լսել Պարզեւ ԷՖ. Փափագեալէ, կ'ուզէք որ ըսէ թէ ես ձեռն կերայ և մեր ջգերը թփնդ հանէ: Այդ գործին մէջ այս ժողովը ինքն ալ պատասխանատու է որովհետեւ միշտ ձեռք առնուել են վաղանցուկ, պալլիսիսի միջոցներ, ոչ թէ հիմնական: Այս ժողովը երբեք խնդրի հիմնական լուծումը ձեռք չէ առել, խուսափել է ձեռք առնելէ: Դուք կը յիշէք որ ես հարցադրումներ բրած եմ այդ մասին և տարիներէ ի վեր պատասխանուած չէ: Միշտ էլ Վարչութիւնները ըսել են թէ՛ «պատրաստ չենք պատասխանելու», և սակայն որոշումներ են կայացրել, պատուիրակ պատուիրակի ետեւէ ուղարկել են: Պարզեւ ԷՖ. Փափագեալ լսելով՝ սմանց փափաքն է ծիծաղել, հեզնել. այդ վերապահները ուրիշ յարմար ժամանակի՝ ոչ մի նպատակ կայ այժմ՝ զայն լսելու, ուրիշ անգամ արդէն պիտի խօսին: Այս ժողովը պէտք է որ չբաւականանայ ոչ միայն Վարչութեան տեղեկագրով, որ իր ամբողջ հակասութիւնները կ'արգարացնէ և կ'առաջարկէ վաւերացնել զայն: Ժողովս պէտք խնդրին ամբողջութիւնը ձեռք առնէ, ամբողջը ուսումնասիրէ: Պարզեւ ԷՖ. Ինչ էլ տա՛ն ինքն է այս վէճերի պատասխանատուների մէջը. որի բացատրութիւնները երբեք չի լսուել չի պահանջուել այս ժողովէն: Ուստի պիտի խնդրէի որ չափազանց լրջութեամբ վերաբերուինք խնդրին. բոլորէական ազդեցութեան տակ որոշում չառնք: Անմիջապէս գործը ուսումնասիրելու, միջոցներ ձեռք առնելու ենք ձեռնող և ձեռնողներին նկատմամբ: Խմբակցութիւնների ներկայացուցիչները որոշել են առաջարկել ժողովիս, որ մի Խորհրդարանական Յանձնաժողով կազմէ, որ չափազանց քիչ նոյն իսկ տասը օրու ան պայմանաւոր մէջ մի ընդարձակ տեղեկագիր բերէ այստեղ, որպէսզի ժողովը չենթարկուի բոլորէ անգիտակից ապուստրութեան, որոնք հետեւանք կարող են լինել Վարչութեան հակասական որոշումներին:

Հ. ԽՈՍՐՈՎԵԱՆ ԷՖ.— Ձեռ գիտե՛ք թէ խմբակցութեանց ներկայացուցիչները ինչ մտածել են. բայց ըստ իս լուսագոյնը այն է որ հոս բանի մը յանգինք: Մեր խմբակցութիւնը այդ վիճարանութեան մէջ չէ եղած: Վարչութեան այս տեղեկագրով երևան եկաւ մեր ազգին բարոյական մտանկութիւնը իր ընդհանուր ժողովին մէջ. իր վարդապետներուն մէջ, իր վանքերու միաբանութեանց մէջ: Վարչութեան պատուիրակը ձեռ է կերած, երբ կ'ըսենք որ հոս խօսի, կամ կիրքը ասպարէզ կը գտնէ և կամ քեօրին: Այսօրու ան երեսուցէ մի խնդիրը 10—15 օրու ան մէջ լուծուելիք խնդիր չէ: Ես իմ բարեկամներու հետ կ'առաջարկեմ ընդունիլ տեղեկագիրը, արածել Վարչութիւնը որ իր ուղած կերպով անմիջական ֆօնթրօլի գործ դնէ: Մենք եթէ լսինք որ Պարզեւ ԷՖ. խօսի, որովհետեւ ան վարդապետներուն ըրածը մօտէն գիտէ, թող իր պատասխանատուութիւնն ալ ճշգուի իր վկայ և Վարչութեան ներկայացուցիչ. և սակայն անոր խօսքը կատարածի տակ չենք կրնար առնել, ինչպէս որ չենք կրնար Տեղապահին խօսքին կարեւորութիւն չի տալ: Շատ ենք տեսներ այս ինչ կամ այն ինչ Խորհրդարանական Յանձնաժողովներ, որոնք կազմուել և գործ չեն տեսներ: Եթէ կ'ուզէք նոր մըն ալ ընտրեցէք, բայց քօնթրօլի իրաւունքը ալ թող գործադրուի:

Յ. ՇԱՀԻԿԵԱՆ ԷՖ.— Ժողովս Վարչութեան տուել է այդ իրաւունքը և չէ գործադրել:

ՏՕՔԹ. ՓԱՇԱՅԵԱՆ ԷՖ.— Կը բողոքենք. կ'ըսէք թէ հակասութիւններ կան տեղեկագրին մէջ և փաստ չառելք: Կ'ըսէք թէ քօնթրօլի իրաւունք չգործադրեցինք և փաստ չառինք. ուրեմն ամբաստանութիւններ կ'ընէք, փաստեր ալ տուէք:

ՏՕՔԹ. ԹԵՐՁԵԱՆ ԷՖ.— Թեր ու գէ՛մ խօսեցաք, նոյն իսկ քուէի տաւաղակ եղաւ: Բայց Վարչութեան ալ խօսք տուէք, որ պատասխան տայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Անմիջապէս. զանա-

զան հոսանքներ կան, արտայայտուեցան:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ.— Վարչութեան այդ տեղեկագրին վրայ դիտողութիւն տնիմ: Ա. դմափն Վարչութեան նամակ մը եկած է ըստ օրինի. ասոր տակը Պատրիարքը չէ ըստորագրած իրը Նախագահ Կրօնական Ժողովի ատենապետն ալ, որ ներկայ էր եզեր ժողովին՝ չէ ստորագրած: Յետոյ, ատիկա օրակարգի առաջին խնդիրը չէ, այլ օրակարգի առաջին խնդիրն է թիւ 17ի բանաձեւին քուէարկութիւնը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Հոս չենք եկած դեռ:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ. (Շարունակելով).— Այս խնդիրը հոս բերել թիւ 17ի հաւասար խնդիր մը ստեղծելէ: Ով որ բրած է, միտքը ազգը երկպառակելէ, նորէն միտքերը զրգուկ է հարկ չկար որ հոս զար. բուն խնդիր այն է և ամէն մարդ գիտէ որ երբ հոս կուգայ ինչ կիրքեր կը յարուցանէ:

Ս. ԷՍՄԵՐԵԱՆ ԷՖ.— Ամէն մարդու համար չէ:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ. (Շարունակելով).— Երկպառակութիւն ձգել ժողովին մէջ անպատան է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ըսիք ատիկա:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ. (Շարունակելով).— Այս յառաջաբանէն ետք, նախ սա ըսեմ որ եթէ հոս Պարզեւ ԷՖ. չի լսենք, պէտք է հակառակ կողմը Միաբանութիւնն ալ լսենք: Պարզեւ ԷՖ. իրր երեսփոխան հոն դացած է. Խորհրդական ԷՖ. կ'ըսէ թէ ան Վարչութեան ներկայացուցիչ էր: Սխալ է այդ. երեսուցէ մի խնդիրը ինչ ատիճանի վրայ ըլլալը և ինչ ծագում ունենալը հասկնալու համար պէտք է գիտնանք որ Տեղապահը և Պարզեւ ԷՖ. ստորքեցին այդ գործը: Տեղապահը, երբ զինք Պատրիարք չընտրեցին, վանքի գանձէն 120 տկի գրպանեց իրր ծախ՝ գնաց եզրիպատ, անկէ եկաւ հոս: Ամբողջ տարի մը հոս կեցաւ, ով հարցուց անոր, ով բացատրութիւն պահանջեց: Անոր տեղը փոխանորդ մնաց Գրիգորիս, վրդ. Պոյաճեանը: Օրին

մէկն ալ երբ հարցուցինք՝ որոշակի բառ որ հրաժարական տուած է և էջմիածին կ'ուզէ երթալ բայց մերժեցինք իր հրաժարականը և Երուսաղէմ գնալ ըսինք. ան՝ «մինակ չեմ երթար» պատասխանեց. Պարգեւ էֆ.ն ալ հետ տուէք, անոր ըսող եղաւ թէ՝ մէկտեղ չի կարելի, դուն գնայ մենք կը զրկենք: Ան գնաց. դեռ Պարգեւ էֆ. Երուսաղէմ չգացած ինք արդէն անգամ մըն ալ հրաժարագիր զրկեց և էալիսէ երթալ ուզեց: Այնքան անգիտակից է որ չի գիտեր թէ էալիսէն արդէն իր առաջնորդը ունի, իսկ ինքը կը հեռագրէ թէ՝ ճնշումի տակ է հրաժարած (Նաթանեան էֆ. բեմ կ'իլլէ):

ԱՏԵՆԱՊԵՏ էֆ.— Պաի աւարտէ՛ք.

ՀԱՅԿ ԽՕՃԱՍՍՐԵԱՆ էֆ.— Խնդրին պատմականը արդէն լսած ենք:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ էֆ. (Շարունակելով).— Ըսելիքս լսելէ յետոյ դատեցէք, ինչու կ'ընդ միջէք. Ինքնաբերաբար Տեղապահը ինք իր ստորագրութեամբ իսկ հրաժարած է: Կարգայինք լրագիրներու մէջ ալ թէ՝ Տեղապահը և Միաբանութիւնը էջմիածին՝ Վեհ. Կաթողիկոսին նամակ գրած են Պատրիարքական ընտրութեան ինդրին համար, և մինչև վերջ Տեղապահը Միաբանութեան հետ միեւնոյն կարծիքը և տեսութիւնը ունեցած է անոր ընտրելիս ցանկ պատրաստելու պէտք չէ տեսած, իսկ երբ Պարգեւ էֆ. գնաց, վերջին վարկեանին Վօրք Ֆաս մը բրտու և հիմայ կ'ըսէ «ճնշում բանեցուցին»։ Ինչ ըսել է ճնշում. եթէ Պարգեւ էֆ. Յամիս կեցած է, մենք ծանցած գացած ենք հոն և երեք տարի կեցած ենք, հոն աւելի կատարարող ձեռքն է որ կը պակսի:

ՊԱՐԳԵՒ Էֆ ՓԱՓԱՋԵԱՆ (Թուղք մը բարձրացնելով եւ ցոյց տալով).— Մահուան սպաննալիք կայ հոս ահաւասիկ գրութիւնը:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ էֆ. (Շարունակելով).— Այս պարագաները նկատի առնելով, առանց նախապաշարման, ինչպէս որ բառ Շահրիկեան էֆ. մանրամասն քննութիւն կատարել պէտք է:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ էֆ.— Ես ինքս ինձ վերաւորուած կը զգամ եթէ իմ առաջարկը Նաթանեան էֆ. ի այդ բացատրութիւնները եզրակացութիւնը համարուի:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ էֆ.— Խնդիրը լուրսաբանելու համար Խորհրդարանական Յանձնաժողովին ես ալ համամիտ եմ. իսկ ես ինչ մատչելութիւն որ ունիմ, համաձայն չեն տանք Շահրիկեան էֆ. ի մատչելութեան:

Վ. ԹԵՔԷԼԵԱՆ էֆ.— Թէ ինչու ընդդիմացայ Պարգեւ էֆ. ի խօսելուն. ինձի համար հետաքրքիր չէ թէ ան ինչպէս ծեծ կերպով. անշուշտ հետաքրքրական կ'ըլլար, սակայն ժողովին դուրս անձնապէս իւրաքանչիւրս կրնանք հարցնել թէ օրինակ ինչպէս խաղաղանով հրապարակով զարկին իրեն: Եթէ իրր երեսփոխան խօսք կ'ուզէ և ի մէջ այլոց առ ալ կը պատմէ՝ իր իրաւունքն է այն: Բայց դիւանի կամ ու է ուրիշ երեսփոխանի առաջարկով խօսելու հրաւիրելով զայն ինդրէն չեղած կ'ըլլանք: Վարչութիւնը պէտք է բացատրէ թէ ինչու հոն զրկեց զայն: Խեղճ Պարգեւ էֆ. անշուշտ քիչ մը խոհեմ չէ չարժած ընդունելով, այդ պաշտօնը և ուզելով աւարտել իր երբեմնի բացած գործը, և սակայն չէ յաջողած: Այժմ Վարչութիւնը տեղեկագիր մը բերած է, եղածը կը պատմէ ու նոր պատուիրակ զրկելու առաջարկ կ'ընէ: Մինչդեռ ինքը լաւ գործադրած չէ ժողովիս որոշումները: Մենք Վարչութեան օժիքէն պէտք է բռնենք և ըսենք թէ այս էր բրածդ, ատով կարծեցիր քու պարտաւորութիւնդ կատարած ըլլալ, Պարգեւ էֆ.ն, հակառակ իր ուղիմութեան, ինչ հանգամանքով զրկեցիր, և ինչ հանգամանքով աւելի մեծ սխալ մը կը գործես նորեր ալ զրկելով: Ես թեր կամ գէմ չեմ Երուսաղէմի ինդրին մէջ. ես խնդիրը միանգամ ընդ միշտ լուծելու կողմն եմ: Գուցէ քիչ մը երկար տեւէ, բայց պէտք է վճռուի, ուրիշ ճար չկայ: պէտք է այս ժողովը ստանձնէ գործին լուծումը քանի որ Վարչութիւնը չկրցաւ, ինչպէս որ իր տեղեկագրին մէջ ալ կ'ըսէ ան: Համամիտ եմ Շահրիկեան էֆ. ի առաջարկին որ Խորհրդարանական Յանձնաժողով մը կազմուի և կարճ ժամանակի մէջ իր տեղե-

կադիրը բերէ. Վարչութիւնը ինչպէս կ'ուզէ թող այնպէս նկատէ:

ՏՕՔԹ. ԹԵՐԶԵԱՆ էֆ.— Ամէն անգամ որ Վարչութեան նկատմամբ ակնարկութիւններ կ'ըլլան՝ պէտք է որ Վարչութիւնը խօսի:

ԱՏԵՆԱՊԵՏ էֆ.— Վարչութիւնը ամէն ատեն իրաւունք ունի խօսելու. սակայն այժմ խօսքը Բիւրատ էֆ. ինն է:

ՎԱՐԴԳԷՍ էֆ.— Ինչու չէք թողուր որ Վարչութիւնը խօսի:

ԱՏԵՆԱՊԵՏ էֆ.— Շատ լաւ թող խօսի:

ՏՕՔԹ. ԹԵՐԶԵԱՆ էֆ. (Վարչութեան կողմէ).— Պատրիարքական ընտրութեան վեցանուն ցանկին համար այս ժողովը Վարչութեան կարծիքը ուզեց լսել: Մենք առաջարկեցինք որ նոր եօթնանուն ցանկ մը կազմուի. ժողովը արտօնեց. ուրեմն պատկառելի ժողովիդ հաւանութեամբ է որ ընտրութեան նոր հրահանգ զրկեցինք Երուսաղէմ, մինչդեռ հիմա մեզի «յանցանք մը ըրիք» կ'ըսէք: Մեզի կը մնար գործադրել այդ որոշումը, մենք հեռագրեցինք, մեզի պատահանեց Տեղապահը Երուսաղէմէն թէ «անկարելի է նորը կազմել, չեն ընդունիր, կրնայ խողովութիւն առաջ գալ»։ մենք նորէն հեռագրեցինք որ Միաբանական ժողով գումարէ և մեր հրահանգը հաղորդէ. նորէն հեռագրուեցաւ թէ Միաբանական ժողովն ալ կը մերժէ նոր ցանկ մը կազմել: Խորհեցանք թէ ինչ միջոց կրնանք գործադրել, ժողովիս բերելէ առաջ խնդիրը: Պարգեւ էֆ. Փափագեան մասնաւոր գործով մը Եգիպտոս կը գանուէր, հեռագրեցինք իրեն որ երթայ Երուսաղէմ և համոզէ Միաբանութիւնը, ըսէ որ մեծ բան մը չէ մեր պահանջածը. նոր ցանկ մը թող կազմեն, նոյնիսկ ազատ են ամբաստանաւորներն ալ ցուցակի մէջ դնելու: Պարգեւ էֆ. գնաց հոն ոչ-պաշտօնապէս, անիկա լիազօր պատուիրակ չէր: Այժմ ահա դժբախտաբար Դանիէլ Սրբազանը, զոր ժողովը Տեղապահ կարգեց, անարգելով՝ հրաժարած է, միւս կողմէ միաբանութիւնը կը մերժէ նոր ցանկ մը կազմել, ինչ կ'ըսէք:

Վարչութիւնը ի գիտութիւն Ձեզ կը հաղորդէ, թէ ինքը հարկ եղածը ի գործ պիտի դնէ և կրնայ աւելի մեծ զօրութեամբ առաջ տանիլ գործը. բայց այժմ իրաւունքը ձերն է, խնդիրը վիճարանութեամբ լուսարանեցէք և ձեր որոշումը մեզի հաղորդեցէք որ գործադրենք:

Ս. ԲԻԻՐՍԱՏ էֆ.— Վարչութիւնը լսելէ ետք, պարտաւորիչ կը տեսնեմ ամէն բան մերկութեամբ երեւան բերել և դիմակները վար առնել: Ժամանակէ մը ի վեր մատչելութիւն մը կայ, պատուիրակներ զրկելու ակաւոր մը կայ, դեռ ամէնէն դառնագոյն փորձառութիւններով ալ չհամոզուեցանք, ու նորէն և միշտ պատուիրակներուն թիւը կ'աւելցնենք, պիւտճէին վրայ ալ գումարներ բարդելով: Այսօր ես հաստատ համոզուած եմ որ պատուիրակներ խրկելով աւելի կը զրգռենք, ջղագրգռութիւնը կ'աւելցնենք: Միաբանութեան մէջ՝ Վարչութիւնը նախ և առաջ լաւագոյն բանը բրած պիտի ըլլար Պատրիարքական ընտրութիւնը կատարել տալով: Միաբանութեան կը գրուի, որ պատրիարքական ընտրելիաց նոր եօթնանուն ցանկ մը պարտաւոր է. կը պատասխանուի թէ օրինաւոր չէ այս: Վարչ. յետոյ կ'առնէ իր նախապէս տուած հրահանգը և կ'ըսէ թէ, ընտրելիութենէ նախապէս արգելած Յմիաբանները, կրնան ընտրելի ըլլալ. ուրեմն բոլոր խնդիրը եօթնանուն

ցանկը ամբողջացնելու համար մէկ անձ մը աւելցնելու մասին էր: Իսկ Վարչութիւնը կը պնդէ որ նոր ընտրութիւն կատարեն, ինչ զաղանիք կայ ասոր տակը.— Որովհետեւ այդ ցանկէն Միաբանութիւնը ինչպէս գիտէք դուրս ձգած է մէկ երկու վարդապետներ, զորս Պատրիարք տեսնելու ցանկութիւն ունեցողներ կան հոս՝ ահա Երուսաղէմի խնդրին մէջ մեծագոյն կոխը: Բոլոր ձախորդութիւնը այն ատեն սկսաւ երբ Խորհրդարանական Յանձնաժողովի խեղճուկ տեղեկագիրը վաւերացուեցաւ հոս, այն տեղեկագիրը որ 3-4 տարիէ ի վեր կը մնար և վերջերս արբուած որոշումով մը չեղեալ նկատուած է անիկա և Վարչութեան յանձնուած է գործադրութիւնը: Ահաւասիկ խնդրոյն հանգոյցը: Ուրիշ կէտ մըն ալ կայ. Վարչութիւնը Երու-

սաղէմի այդ ամենայն հայոց սեպական Պատ-
րիարքական Աթոռը կ'ուզէ հաւատարմանը
գաւառի պարզ վանքի մը, նոյն իսկ զայն
Վանօրէից Խորհուրդին ենթարկելու համար
առաջ կ'երթայ. մինչդեռ Երուսաղէմի վան-
քը միջազգային հանգամանք ունեցող մեծ
կեդրոն մըն է, իր գոյութիւնը դարեւ ի
վեր պահած և հաստատած է, կարելի չէ
մէկ գրչի հարուածով տապալել զայն: Հոն
Միաբանութիւն մը կայ, Վարչութիւնը կ'ըսէ
թէ ըմբոստացած է. Կեդրոնը մինչև այսօր
երբեք սակայն նկատի չառաւ անոր ձայնը,
միայն լսեց զայն ամբաստանողները: Այսօր
հիս ամէնէն բռնապետական դատարաններն
անգամ ամբաստանեալները լսելէ առաջ չեն
դատաւարտեր: Այդ միաբանութեան անդամ
վարդապետներ ամբաստանուեցան այս ժողո-
վին մէջ, ու՝ առանց զրկենք լսելու գա-
տաւարտեցինք իբր ըմբոստ: Այսօր, ինչ որ
ալ ըլլայ ըմբոստութիւնը, ընտրական իրա-
ւունքներէ չզրկելու զիրենք: Այսօր միա-
բանութեան խնդրանքն է որ ինք ընտրէ իր
պատրիարքը. և կ'ուզէ որ Պատրիարքը իր
ընտրելի եպիսկոպոսներէն ըլլայ:

Վ. ԹԵՔԵՆԱՆ ԷՖ. (ընդմիջելով). — Ո՞ւր
է մերկացումներ չըրիք, մերկութիւններ պի-
տի ցոյց տայիք:

Ս. ԲԻԻՐՍԱՏ ԷՖ. (Շարունակելով). —
Ասկէ աւելի մերկութիւններ կ'ըլլայ: Մաք-
սուան վրդը հոս բերիք 11,000 ոսկի
պարտք ունի ըսիք, և դուրս եկաւ որ ոչ
միայն պարտք չունի, այլ և 400 ոսկի առնե-
լիք ունի, ահա մերկութիւնները:

Պատուիրակ զրկելու ախտէ մը վարակ
ուած ենք:

Մ. ՀԱՅԱՍՏԱՆ ԷՖ. — Շատ լաւ թող ա-
նոնք հոն հանգիստ Բէյն ընեն:

ՍՄԲ. ԲԻԻՐՍԱՏ ԷՖ. — Գացող պատուի-
րակները ուրեմն ծեծ ուտելու սահմանուած
են, եթէ ուրիշ Պարզեւ Էֆէնտիներ ունիք
զրկեցէք:

Պ. ՓԱՓԱԶԵԱՆ ԷՖ. — Չեմ կրնար մաս-
նակցիլ այլևս ժողովին երբ անամօթութիւն-
ներ իրենց պաշտպանները կը գտնեն այստեղ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վերջնական կորակա-
ցութեան յանգեցէք, այսպէս չի կրնար շա-
րունակուիլ. չեմ կրնար թոյլ տալ, պէտք է
եւ առնէք խօսքերն իւր, անձնական ակնարկ
ըրիք:

Ս. ԲԻԻՐՍԱՏ ԷՖ. — Անոր համար որոշ
ակնարկութիւն չըրի: Կը պնդեն թէ գաղտնի
հրահանգներ կը զրկուին ասկէ:

Ա. ԱԼՊՈՅԱՆ ԷՖ. — Վարչութիւնը
կ'ամբաստանէք կոր:

Ս. ԲԻԻՐՍԱՏ ԷՖ. — Այո՛, պատուիրակ
զրկելու այսպիսի փափուկ խնդրով երբեք
պէտք չէ զբաղինք, այլ խաղաղարար միջոց-
ներու գիմենք, հաշտարար ընթացք մը ու-
նենանք, առանց նոր խնդիր հանելու, նոր
գայթակղութիւններ ստեղծելու:

Ս. ԷՍՄԵՐԵԱՆ ԷՖ. — Հինգ վայրկեանէն
աւելի չպիտի խօսիմ: Երբ որ թերթերու մէջ
կարդայի ծեծին խնդիրը, մտածեցի որ հիմ
պատմութիւն մ'է ատիկայ որ միշտ կը կրկնուի
Երուսաղէմի մէջ. այդ առթիւ առակ մը
միտքս ինկաւ, պատմեմ մտիկ ըրէք: Գիւղի
մը եկեղեցիին կից աղբիւր մը կար, ուրիշ
ժողովուրդը ջուր առնելու կ'երթար: Օր մը
ջուր առնողներուն միջեւ կռիւ մը կը ծագի
և կը սկսին սափորները իրարու գլուխին
զարնել: Գիւղացիներէն մէկը աւագեցեցին
կ'երթայ և կը խնդրէ որ գայ հաշտեցնէ, իսկ
աւագերէցը կը պատասխանէ. «Ձեզեք թող
իրարու գլուխ պատուեն, թող սափորները
ջարդուին իրարու գլխուն վրայ. ես ծախու-
շատ սափորներ ունիմ, եթէ աղպէս չըլլա՛մ
որո՞ւ ծախեմ»: Հաշտարար կերպով կարգա-
դրենք, սպասեմք ըսողներն ալ ըսել կ'ուզեն
թէ շատ սափորներ ունին ծախու. ձեզեք
որ ալան թալանը իր բառին բուն նշանակու-
թեամբ շարունակեն, ձեզեք որովհետեւ հա-
շտներ ունին: Վճռական քայլեր պէտք է
առնել. խնդրին մէկ ծայրը Եգիպտոս է միւս
ծայրը Պոլիս-Ֆէրիքիւլ, անհասներ ըլլան ա-
տոնք թէ միաբանութիւններ, պէտք է ջախ-
ջախել: Հաշտարար ընթացք մենք զիտենք
ի՛նչ ըսել է:

ՀԱՅԿ ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ ԷՖ. — Դիչ մը պա-
շարեամբ պէտք է խորհինք և վանքին ու
հաստատութեան շահը նկատի ունենանք,
սուր զգացումները մի քիչ փխտեցնենք: Շահ-
րիկեան Էֆ. ի գիտողութիւնները աչքառու
էին. հոս Պարզեւ Էֆ. ի համակիրներ թէ
հակակիրներ ըլլանք՝ պէտք չէ զայն մեզա-
դրենք. Վարչութիւնն էր յանցաւոր որ զայն
զրկեց, Վարչութեան ներկայացուցիչն էր ան:

ՏՕՔԹ. ԹԵՐԶԵԱՆ ԷՖ. (ընդմիջելով). —
Խորհրդարանական լեզուի մէջ յանցաւոր
բառը չատ խիստ է:

ՀԱՅԿ ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ ԷՖ. — Վարչու-
թիւնը իրաւունք չունի երեսփոխաններու
խօսքերը իր ուզածին պէս մեկնելու:

ՏՕՔԹ. ԹԵՐԶԵԱՆ ԷՖ. — Վարչութիւն
մը ամբաստանուելէ և ամբաստանութիւնը
հաստատուելէ ետք «յանցաւոր» կրնայ կոչ-
ւուիլ:

ՀԱՅԿ ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ ԷՖ. (շարունակե-
լով). — Այսու ամենայնիւ, իրողութիւն մը
կայ մէջ տեղ, Պարզեւ Էֆ. ներկայացուցիչ
մըն էր հոն: Վարչութիւնը կրնայ յանցաւոր
եղած ըլլալ և է՝ զայն հոն զրկելով, բայց
Պարզեւ Էֆ. ներկայացուցիչ ըլլալէ չի դադ-
րիր ատով: Առաջինը չէ այդ ըմբոստու-
թիւնը, երբ կը յայտնէ իրենց թէ՛ ազգային
իշխանութեան ներկայացուցիչ է ինք, պէտք
չէր ըմբոստանային և ճանհային ազգային
իշխանութեան հեղինակութիւնը. պէտք է
այս տեղ ճշդենք ազգային հեղինակութեան
եղանակը: Պէտք չէ սակայն ամբողջ միա-
բանութիւնը մէկէն յանցաւոր նկատել, անոր
աննշան մէկ մասն է որ վանքին յարաճուն
վիճակը այդ գրողութեան հասցուցած է. էս-
մէրեան Էֆ ի համակարծիք եմ այդ մասին:
Պարզեւ Էֆ. ի երեկուան մտերիմները այսօր
հակառակ տրամադրութիւն ցոյց կուտան.
ինչո՞ւ այս մտայնութիւնը, որովհետեւ Ազ-
գային իշխանութեան միջոցով հոն մանող
մարդիկն են որ ազգային իշխանութեան
փրկութիւն պահպանութեան հոգ չեն տանիր
և աւելի իրենց կիրքերու թելադրութեամբ կը
շարժին: Այստեղ մենք երեսփոխաններ ենք բո-

լորս ալ և կը կազմենք Ազգային ժողով և
Վարչական ժողով. պէտք է խոստովանինք
թէ մեր իսկ սխալներու հետեւանքով է որ
Միաբանութիւնը յանցանքներ գործեց. դոր-
ծուած սխալներու մեծագոյն բաժինը մենք
ալ ունինք, մենք իսկ ստեղծած ենք այս
տաղնապալից վիճակը, որով մենք ենք յան-
ցանքին պատասխանատու: Ի՞նչ ըրինք, երբ
հոս բերուեցաւ Խորհրդարանական Յանձնա-
ժողովին տեղեկագիրը, որով ամբողջ միաբա-
նութիւնը կ'ամբաստանուէր, որ մըն ալ ե-
րեսփոխան մը ելաւ հարցնելու թէ՛ «Պատ-
րիարքական բնորոշութիւն չպիտի կատարենք»,
իսկ մենք, առանց մտածելու թէ՛ ամբողջ
Միաբանութիւնը իբր ամբաստանուածներ՝
զրկած ենք ընտրական իրաւունքներէ, պատ-
ուիրակներ զրկեցինք իբր լիազօր ներկայա-
ցուցիչներ և ընտրութեան հրահանգ տուինք
որով նուիրագործեցինք մեծ սխալը և ահա
այս դժբաղդ արդիւնքը ստացանք: Երուսա-
ղէմի կնճիւղ տարիներէ ի վեր կազմուած է.
տեսակ մը խմորում գոյացած է հոն, և այդ
խմորը կրցաւ Միաբանութեան 60 հոգի
կեդրոնացնել փափալ ցանկի մը վրայ, ի-
րենց օրինական իրաւունքն է, անոնք այդ
տեսակ ընտրութիւնը կատարեցին և հոս զըր-
կեցին արդիւնքը: Դաւիթ Էֆ. Տէր-Մովսէս-
եան մեծ յանցաւորը Վարչութիւնը կը հա-
մարի: Ան ալ կը պատասխանէ թէ՛ Երեցեան
Սրբ. ի վախճանելէն ետք նոր ցանկ մը պատ-
րաստել տալու հրահանգ տուաւ ժողովս.
ճիշդ է. և մենք առանց մտածելու թէ՛ ամ-
բաստանեալներ կան ընդունեցինք այն ձեւով
որ Վարչութիւնը ներկայացուց, Վարչու-
թիւնը նախ ըսաւ թէ երեքը ամբաստանեալ-
ներ են, յետոյ առանց այս ժողովին հարց-
նելու՝ նոր հեռագիր մը գարկաւ հոն թէ
անոնց անուններն ալ կրնան դնել ցանկին
մէջ: Միաբանութիւնն ալ իրաւամբ
կ'ըսէ. եթէ դուք այդ 6ին համար առաք-
կութիւն չունիք, ուրեմն ինչո՞ւ նոր ցանկ
մը կազմենք: Ես կը կարծեմ թէ այս աղ-
մուկը պարզ քահանայքի խնդիր է և իրա-
կանութեան մէջ ոչինչ չկայ: Աւելի կարեւոր
հարց մը ունիմ յիշեցնելիք, ինչ որ շատ իրա-
ւամբ քննադատելի մէկ կողմը կը կազմէ
Վարչութեան համար: Այս ժողովը Միաբա-
նութեան կանոնադրին մէկ քանի կէտերը
փոփոխեց...

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. (ընդմիջելով). — Այդ մասին ուրիշ տեղեկագիր մը բերած ենք:

ՀԱՅԿ ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ ԷՖ. (Շարունակելով). — Շատ ուշ. Վարչութեան իրաւունքն էր ելմտական քօնթրօլ հաստատել, բան մը որ կրնար ատենին ըմբոստութեան առջևը տանել: Մեզի համար այդ է կարեւորը, Պատրիարքը կրնայ ըլլալ այս կամ այն միաբանը, բայց վանքին ելմտական գործին վերայ հսկողութիւնն է խնդրին հիմը: Դեռ ատոր համար Յանձնաժողով մը իսկ կազմուած չէ: Եթէ Վարչութիւնը անընդունակ է չորս հոգի գտնել որ ազգային իշխանութեան հեղինակութիւնը պահպանէ հոն, ըսել է թէ քայքայումը Երուսաղէմէն չսկսիր այլ հոսկէ: Մենք Երուսաղէմի մէջ ազգին գերագոյն շահերն է զոր նկատի պիտի առնենք: Այդ Յանձնաժողովը անհրաժեշտ էր, ո՛չ թէ ընտրական իրաւունքի այդ խնդիրները քննելու այլ հսկելու վանքին անոր կրեւորութիւն, ազգին տանտնային հոն հաւաքուած հարստութեան որ մեր սեփականութիւնն է և իբր չնոր՝ բացարձակապէս այդ վարդապետներու վայելքին ենթարկուած է: Ես ալ կը ձայնակցեմ Շահրիկեան էֆ. ի առաջարկին որ Խորհրդարանական Յանձնաժողով մը կազմուի, որ ճշտէ, քննէ մեր միջամտութեան իրաւունքի մասերը, անոնք մեր սեփականութիւնն են և կեդրոնին իրաւասութեան տակ կ'իյնան: Գալով Տօքթ. Թէրզեան էֆ. նոյնի առարկութեանց, թէ՛ Վարչութիւնը իր պատասխանատուութեան տակ պիտի շարունակէ գործը հետապնդել, կը պնդեմ որ այլեւս խնդիրը անոր չի վերաբերիր, այլ այս ժողովին և կ'առաջարկեմ որ ան ու է քայլ մը չառնէ այլ ևս Երուսաղէմի վանքին համար՝ մինչև որ Խորհրդարանական Յանձնաժողովը իր տեղեկագիրը բերէ:

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. (Վարչութեան կողմէ). | Հիմա երբ գործը այս ժողովին բերած ենք, երեսփոխաններուն մէջ զանազան կարծիքներ կը գոյանան այսինչը սխալ կը համարի Վարչութեան ընթացքը, միւսը ուղիղ, անձնական կարծիքներ են, խօսք չունիմ: Բայց պէտք է գիտնաք որ Վարչու-

թիւնը իրեն տրուած իրաւասութեան սահմանին մէջ գործած է՝ առանց յետին միաքի: Թէ ինչո՞ւ պատուիրակ զրկեց. պէտք տեսաւ անոր համար, ինչ որ իր պարտքն էր այն կատարել, ինչո՞ւ ին բացատրութիւնը արդէն մեր այդ տեղեկագիրին մէջը կայ: Մենք գերագոյն մարմին որոշումը գործադրեցինք ան մեզի հրահանգ տուաւ նոր ցանկ մը պատրաստել տալու: Նսխորդ Վարչութիւնն էր որ իր կարծիքը բերած էր ցանկին մասին: Ատենապետաց Դիւանին կարծիքն էր որ Ժողովիս բերուեցաւ և Գէորգ Սրբազանի վախճանմամբ այս ժողովը նորէն ձեռք առաւ խնդիրը և պէտք տեսաւ արդի Վարչութեան ալ կարծիքը առնել: Այդ ցանկին մէջ ծանր ամբաստանութեան տակ եղած անձեր կային, որոնք պարագլուխներ էին խոռոխութեանց: Նախորդ Վարչութիւնն էր որ դիտողութիւն բրաւ այդ մասին իր իրաւասու: Մենք մեր նախորդին կարծիքը հաստատեցինք և զանազան հրահանգներ տուինք Երուսաղէմ, ուր ծայրայեղ ընդդիմութեան հանդիպեցան: Պէտք էր որ հոն նոր մարդ մը երթար և ջանար միաբանութեան մէջ եղած նախապաշարումները բաժնայու՝ այդ հրահանգներու մասին, այդ պատուիրակին նպատակը ամփանելով հոն մը: Նալ չէր, այլ 1—2 օր պիտի մնար, հասկընէր պիտի անոնց թէ՛ նոր ցանկ մը կրնան պատրաստել կատարեալ ազատութիւնով, տակէ ցաւայի պատահարը տեղի ունեցաւ: Ըսուեցաւ հոս թէ՛՝ հակասութիւններ կան մեր տուած հրահանգներուն մէջ: Այդպէս բան չկայ: Վարչութիւնը երբեք ու է հրահանգ չէ տուած թէ՛ այդ երեք անունները ցանկին մէջ պէտք չէ դնէք, այլ փոփոխէ՛ր զգացուցեր է իրողութիւնը ինչ որ հոս կեդրոնի մէջ եղած է, ո՛չ նախապէս «վերացուցէք» ըսեր է և յետոյ «դէք» հրահանգեր է: Խնդիրը այժմ այս է. Տեղապահը այս ժողովէն ընտրուեցաւ, Վարչութիւնը կ'ըսէ թէ՛ ճշման տակ հրաժարական տուեր է և մենք հեռագրեցինք Եփա որ Ազգային ժողովին կը վերաբերի այդ կարգադրութիւնը, թէ՛ Վարչութիւնը օրէնքին առջև ճիշդ կը նկատէ Միաբանութեան նոր ընտրութիւնը և Ազգային ժողովին բերած է հարցը: Իսկ Տեղապահը անկէ ետք նոր հեռագիր մը

զրկեց մեզի, ըսելով որ՝ եթէ խռովարարներուն պարագլուխները չհեռացուին վանքէն, ինքը չի վերադառնար հոն: Ատոր համար Վարչութիւնը փութաց հոս բերել խնդիրը, որպէս զի վերջնական կարգադրութիւն մը ընէք: Իսկ ցանկին համար ալ, կ'ըսենք ան կարելի է նորը կազմել: Ահա իրողութիւնը: Վարչութիւնը դէմ չէ Խորհրդարանական Յանձնաժողովի մը կազմութեան:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրը լուսարանուած է, մէկ քանի խօսողներ կան, թող հրաժարին խօսելէ և քուէի դնենք, եթէ Ժողովը կ'ընդունի փակել վիճարանութիւնը:

ՅԱԿՈԲ ՊԱՆՈՒ ԷՖ. — Նոր առաջարկ մը ունիմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այն ատեն ձեռք առաջ խօսք ուղղով կայ:

Յ. ՊԱՆՈՒ ԷՖ. — Խնդիր մը կայ որ 15 օր չէ՝ 8 օր ալ պէտք չէ յետաձգել, մեր պատիւին հետ կազմուի ատիկա: Տեղապահը հրաժարած է, ոմանք Ազգային ժողովը, ուրիշներ Վարչութիւնը, ուրիշներ ալ Պարզէ էֆ. յանցաւոր նկատեցին. սակայն ատոնց ամէնը պատճառ մը չէ որ Վարչութեան պատուիրակը ձեռք առնէ հոն: Պէտք չէ ձգենք որ հոն մնան ծեծողները և ազգին վանքը աւազակներուն ձեռքը թողունք: Պէտք է անմիջապէս և եթէ հարկ է կառավարութեան միջոցով հոս կանչել տանք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թող Ժողովը եզրակացութեան յանգի, դուք ձեր առաջարկը գրաւորապէս տուէք, թերեւս շատ ալ իրաւունք ունիք:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Յիշատի այդ միտքը շատ կարեւոր է, բայց առաջարկը չափազանց փափուկ: Ազգին դէմ ամբողջ ըմբոստացողները ձերբակալել տալ և այստեղ բերել հասկանալի է. բայց վախճանը աւելի

գէշ չլինի: Առաջ ալ տեղի ունեցաւ այդպիսի ըմբոստութիւն, և այդպէս ըրինք, բայց ի՞նչ եղաւ արդեօք: Վանքին դուռները փակեցին: Նորէն այդպէս չլինի զգոյշ լինինք. խնդիրը հիմանց ուսումնասիրենք, յետոյ խստութեան և մաքրագործումի սկսինք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վիճարանութիւնը չարունակենք թէ փակենք:

(Մեծամասնութեամբ որոշուեցաւ փակել վիճարանութիւնը):

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շահրիկեան էֆ. ի բանաձեւը պիտի կարգադրուի:

(Ատենադպիր էֆ. կը կարդայ):

«Ժողովը լսելէ յետոյ Երուսաղէմի խնդրոյն մասին Վարչութեան երկու տեղեկագրերը, ցաւելով որ չէ դորձադրուած գօնթրօլի համար նախապէս տրուած որոշումը առանց քօնթրօլի համար Վարչութեան արդէն տրուած իրաւունքին դորձադրութիւնը յետաձգել ուղղուել, կ'մերժէ պատուիրակութիւն զրկելու մասին Վարչութեան մտադրութիւնը, և խնդրոյն կարեւորութեանը համապատասխան հիմնական վճիռը կարենալ տալու նպատակով, ամենաշատը 15 օրուան մէջ ժողովին լիակատար տեղեկագրելու համար կ'որոշէ կազմել հինգ հոգիէ բաղկացեալ Յանձնախումբ մը»:

ՎԱՐԴԳԻՅԻՍ ԷՖ. — Շատոնց խօսք ուղեցի, չտուին, եղբայրներ, անոնք որ վանքեր տեսներ են գիտեն թէ ինչ որ ալ ընենք ճար չկայ. մինչև որ վարդապետները գործէ չհանենք և անոնց տեղ աշխարհական հոգաբարձուներ չդնենք, վանքին մատակարարութիւնը չի շտկուիր: Վանայ բոլոր վանքերը գիտեմ. վարդապետներ մատակարարական գործի մէջ թողուելուն պէս, անոնք իրենց աւանդական, արմատացած բարքերը ունին:

անդարմանելի են այդ բարքերը, անոնք եթէ ուղեն ալ չեն կրնար ինքզինքնին փոխել: Շահրիկեան էֆ. կ'ըսէ թէ 15 օրուան մէջ կրնայ քննուիլ խնդիրը շատ քիչ է այդ ժամանակը: Վարդապետները յանցաւոր չեն: անոնք տարիներէ ի վեր իրենց սորվածը կը գործադրեն: Կ'առաջարկեմ այնպիսի Յանձնաժողով մը կազմել, որ վանքը հիմնական բարեկարգութեան ենթարկէ. ու է վարդապետի օձիքէն չբռնենք, անոնք իրենց սորվածը կ'ընեն ու պիտի ընեն: Յանձնաժողովին հիմնական բարեկարգութիւնը այն կ'ըլլայ՝ որ վարդապետներու ձեռքէն բոլոր հաշիւները, մատակարարութիւնը և այլն առնէ: Մինչև այդ՝ Վարչութեան ձգենք որ ինք իր խելքը կտրածին պէս շարունակէ:

ԺԱԴ ՍՍՅԱՊԱԼԵԱՆ, էֆ. — Կը ցաւիմ որ չեմ կրնար համակարծիք ըլլալ Վարդգէս էֆ.ին: Ազգ. Վարչութեան պատուիրակը չեմ է կերած. Վարչութիւնը ազէկ բրաւ զայն զրկելով հոն թէ ոչ, այդ չէ խնդիր. այդ անորակելի արարքի մասին կարելի չէ լռութեամբ անցնիլ և ահա այս ժողովին մէջ պաշտպանողներ իսկ եղան. Հիմա այդ երկրորդ տեղեկագիրին մէջ տեղի ծանր բան մը կը տեսնենք թէ՛ Միաբանութիւնը այս ժողովին որոշումներուն ալ կ'անսաստէ, կեղբունի քօնթրօլի իրաւունքն ալ չուզեր ընդունիլ:

(Ատենադպիր էֆ. կը սկսի կարգալ Շահրիկեան էֆ ի բանաձեւը մինչև հոն ուր կայ «ցաւելով» բառը). —

ՏՕԲԹ. ԹԵՐԶԵԱՆ ԷՖ. — Ահա այդ «ցաւելով»ը չի կրնար ընդունիլ Վարչութիւնս, «ցաւելով որ չէ գործադրուած»ը սխալ է և կը մերժենք ինչպէս որ այդ տեղեկագրէն յայտնի է:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Եթէ այդ բացատրութիւնը պատճառ պիտի ըլլայ որ Վարչութիւնը անվստահութիւն նկատէ և հրաժարի, ես կը ջնջեմ այդ. չենք ուզեր այժմ այդ պատճառով Վարչութեան քիչ ստեղծել: Ուրեմն տուէք որ այդ կէտը բարեփոխենք:

(Կէս ժամ դադար)

ՄԱՐԿ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ. — Ես իմ բանաձեւը ետ կ'առնեմ և կը միանամ Տէր-Մովսէսեան էֆ. ի բանաձեւին հետ, Շահրիկեան էֆ. ի հետ համամիտ չըլլալս ապացուցանելու համար:

ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Նաթանեան էֆ. ի յայտարարութիւնը պատիւ է ինձ համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն կը մնայ երկու բանաձեւեր:

ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Մենք և Դաւիթ Տէր Մովսէսեան էֆ. համաձայն ենք հիմնական կէտերի և ցաւ յայտնելու մէջ, սակայն եթէ բարեփոխեցինք մերը, պատճառը այն է՝ որ չուզեցինք Վարչական քիչ քիչ առաջ բերել:

ՏՕԲԹ. ԹԵՐԶԵԱՆ ԷՖ. — (Վարչութեան կողմէ). Այո՛, այդ բանաձեւին մէջ կ'ըսէք թէ քօնթրօլի իրաւունքը չենք գործադրած. բայց մեր երկրորդ տեղեկագիրը չկարգացած յանգած էք այդ եզրակացութեան պէտք էր առաջուց Դիւանի այդ տեղեկագիրն ալ առաջինին հետ կարգար. Դիւանինն է յանցանքը:

ՀԱՅԿ ԽՕՃԱՍՍՐԵԱՆ ԷՖ. — Վարչութեան գիրը առաջ պէտք էր կարգացուեր, երկար վիճաբանութիւններ եղան և Վարչութիւնը չպնդեց ատոր վրայ: Իր իրաւունքն էր պահանջել: Բայց կերելի թէ այդ երկրորդ տեղեկագիրը անշատ է առաջինէն. պէտք է նախ բանաձեւը քուէտրկել: Բանաձեւին հետ և բանաձեւը բուն իսկ այդ տեղեկագրին շուրջը կը դառնայ:

ՏՕԲԹ. ԹԵՐԶԵԱՆ ԷՖ. — Բայց կը պընդենք որ կապ ունի:

ՎԱՐԴԳԵՍ ԷՖ. — Ինչու կ'ընդդիմանաք Վարչութեան պահանջին, թող կարգացուի տեսնենք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շատ լաւ թող կարգացուի:

ԱՐԱՄ ՀԱԼԱՃԵԱՆ ԷՖ. — Տեղեկագրին մէջ պիտէ մը յիշուած է. մենք այս տարուան պիւտճէի գործադրութիւնն է որ պիտի պարտադրենք. նախորդ պիւտճէն չկայ. չենք կրնար հաստատել մեր չտեսած պիւտճէի գործադրութիւնը: Հաշուի խնդիր մը կայ: Մենք պէտք է հրահանգենք որ նոր պիւտճէ մը շուտով պատրաստեն և զրկեն վաւերացման, 38—40000 ռաբլի պարտք ցնցող պիւտճէ մը ինչպէս թոյլ տանք որ գործադրուի:

Ա. ԱԼՊՅԱՆ ԷՖ. — Այս տեղեկագրէն հասկցանք որ, թէ՛ նախորդ և թէ՛ արդի Վարչութիւնը չեն կրցեր քօնթրօլի իրաւունքը գործադրել և Միաբանութիւնը մէկ ու կէս տարուան ընթացքին մէջ Ազգ. Երեսփ. Ժողովին որոշած քօնթրօլի իրաւունքն ալ մերժած և իր ուզածը ըրած է. նշանակալից է ատիկա: Ուրեմն պէտք է բանաձեւ մը որ նոր կազմուելիք Յանձնախումբին արմատական դարման մը ծրագրելու իրաւունքներ տայ:

ՏՕԲԹ. ՓԱՇԱԵԱՆ ԵՒ ՏՕԲԹ. ԹԵՐԶԵԱՆ ԷՖ. — Նոր տեղեկագիր մը ունինք այդ մասին ինչո՞ւ առաջ այդ չէք կարդար:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մենք վիճաբանութիւնը փակեցինք, բանաձեւը քուէտրկելէ վերջը կը կարդանք:

ՎԱՐԶՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆԷՆ. — Իրաւունք չունիք այդպէս ընելու երկրորդ տեղեկագիրը կապ ունի խնդրին հետ. պէտք է կարգացուի:

ԴԱԻ. ՏԵՐ-ՄՈՎՍԵԱՆ ԷՖ. — Օրինական դիտողութիւն ունիմ: Առաջին տեղեկագիրը կարգացինք, շատ մը թեր ու դէմ վիճաբանութիւններ եղան. այս նոր տեղեկագրին մէջ ինչ մէջ պիտի բերուի ինչ մտքով, դացուի:

Ինչ հիման վրայ վիճաբանութիւնը փակուելէ վերջ նոր տեղեկագիր պիտի կարգացուի:

ՎԱՐԴԳԵՍ ԷՖ. — Օրինական դիտողութիւն ունիմ ըսիք. ներքին կանոնագրին մէկ յօդուածը պէտք է բերէք մէջ տեղ անշուշտ ոչ թէ վիճաբանինք:

Մ. ՀԱՅԱՍՏ ԷՖ. — Դուք չէք գիտեր այդ տեղեկագրին բովանդակութիւնը. Վարչութիւնը կ'ըսէ թէ կապ ունի:

Դ. ՏԵՐ-ՄՈՎՍԵԱՆ ԷՖ. — Օրինական դիտողութիւն ունիմ: Երբ վիճաբանութիւն մը փակուի ժողովին որոշումով, այլևս բացի բանաձեւէ ուրիշ վիճաբանութիւն կարելի չէ բանալ օրէնքով: Եթէ Վարչութիւնը իրեն հակառակ բան մը տեսնէ բանաձեւին մէջ՝ կրնայ պարբերութիւն մը աւելցնելու առաջարկ բերել և ընդունիլ տալ: Դիտողութիւնս օրինական է թէ ոչ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շատ օրինական է և անմիջապէս պէտք է բանաձեւը կարդանք, բայց այս երկրորդ տեղեկագրին ընթերցման համար որովհետեւ կը պնդէ Վարչութիւնը, ժողովիդ թոյլտուութիւնը կը խնդրեմ. եթէ կը թոյլատրէք...

ՏՕԲԹ. ՓԱՇԱԵԱՆ ԷՖ. — Բայց ատիկա կապ ունի բանաձեւին հետ ալ:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Տէր-Մովսէսեան էֆ ի դիտողութիւնը շատ օրինական է: Բայց քանի որ ես եմ խմբագրողը բանաձեւին կարելի է այդ առարկութիւնը հաշտեցնել Վարչութեան երկրորդ տեղեկագիրը լսելու իրաւունքին հետ: Բանաձեւը կառարկէ թէ Վարչութիւնը իր քօնթրօլի իրաւունքը չէ գործադրել. եթէ դրա հակառակ փաստ կ'այ այդ երկրորդ տեղեկագրին մէջ թող կարգացուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քանի որ վարչութիւնը կը պահանջէ այդ տեղեկագրին ընթերցումը կը հրաւիրեմ Ատենադպիր Էֆ.ին կարգաւ դայն:

(Քուէարկութիւն և քուէհամար կատարուելով հետեւեալ արդիւնքը հռչակուեցաւ զիւանի կողմէ):

Թիւ քուէարկաց 31:

(Ատենադպիր Էֆ. կարգաց տեղեկագիրը որ կցուած է ատենագրութեան և Շահրիկեան Էֆ.ի բանաձեւը քուէի տրուելով ընդունուեցաւ 17 քուէով):

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քանի որ բանաձեւը ընդունուեցաւ, հիմայ կրնանք կատարել խորհրդարանական յանձնաժողովոյ ընտրութիւնը:

Պետրոս	Էֆ.	Սորապանձեան	Քուէ
Հայկ	»	Սոճասարեան	27
Յարութիւն	»	Շահրիկեան	23
Դաւիթ	»	Տ. Մովսէսեան	23
Արամ	»	Հալաճեան	20

(Ատենանք փակուեցաւ ժամը 6ու կէսին):

Ազգային Ընդհ. Ժողովոյ

ԱՏԵՆԱՊԵՏ

Հ. ԱՐԱՄԵԱՆՑ

ԱՏԵՆԱՊԵՏ

ՏՐ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Վսեմաշուք Ատենապետ Էֆ.

Ազգային Ընդհանուր Ժողովոյ

Ի Կ. Պոլիս.

Խնչպէս Պատ. Ժողովը կ'ընէ Երուսաղէմի Ս. Աթոռոյ գահակալին ընտրութեան առթիւ՝ միաբանական ընդհանուր ժողովոյ կողմէ 1911 հոկտեմ. 17 թուականին պատրաստուած եօթնանուն ընտրելիաց ցուցակն՝ ըստ տրամադրութեան 23րդ յօդուածի Ազգ. Սահմանադրութեան, ժամանակին Սառն Ժողովոյ կողմէ քննուելով, նոյն տարւոյ նոյեմ. 18 թուականաւ յայտագրով մը ներկայացուած էր Պատկ. Ժողովիդ, և նոյն գրով զիտողութիւններ եղած էին ցուցակին մէջ իբր ընտրելի նշանակուած Տ. Նզիա Յովհան.

նէսեան, Վահան Քէչիչեան և Հմայեակ Երէցեան վրդ.ներուն ընտրելութեան դէմ, որոնք Ազգ. իշխանութեան դէմ ըմբոստանալով տեղի տուած էին գայթակղելի անկարգութեանց:

Պատկ. Ժողովը նկատողութեան առնելով յիշեալ ցուցակն, թէպէտ իր Ատենապետաց Դիւանին քննութեան ալ ենթարկած էր ինդիւրն, այլ սակայն նախապատուութիւն տրուած էր Միաբանական 1888ի կանոնագրին մասնակի փոփոխութեան, ինչ որ կատարուեցաւ յետոյ, բայց վաղն զի այս միջոցին վախճանեցաւ ընտրելիներէն Տ. Գէորգ Արքեպիս. Երէցեան, Պատկ. Ժողովը յարմար դատեց ստանալ այդ մասին Ազգ. Վարչութեան կարծիքն, և Սառն Ժողովը՝ ըստ

յանձնարարութեան վերստին քննելով խընդիրն և նկատելով որ ընտրելիներէն մին վախճանած է, և վերոյիշեալ ընտրելիներու վրայ ամրաստանութիւններ կը ծանրանան, տարւոյս Յունվար 31 թուականաւ յայտագրով առաջարկած էր Պատկ. Ժողովիդ վերադարձնել նոյն ցուցակը միաբանութեան, որպէս զի նոյն թուականէն սկսեալ առ առաւելն եռամսեայ ժամանակամիջոցի մը մէջ ըստ օրինի նոր ցուցակ մը պատրաստուի և ուղարկուի ի Պատրիարքարան, և փութով կատարուի Պատր. ընտրութիւնը:

Պատկ. Ժողովը իր Փետր. 1ի նիստին մէջ այս առաջարկն նոյնութեամբ ընդունած և անոր գործադրութիւնը յանձնած ըլլալով Ազգ. Վարչութեան, փութացինք տարւոյս Փետր. 11 թուականաւ գրով մը յանձնարարել Երուսաղէմի Պատր. Տեղապահ Գեր. Տ. Դանիէլ Ս. Արքեպիսկոպոսի, որ ի ժամանակն գրութեան, փութայ անմիջապէս գումարել Միաբանական Ընդհ. Ժողովը և Ազգ. Սահմանադրութեան 21րդ և 22րդ յօդուածոց և 1888ի Միաբանական կանոնագրին 26րդ. յօդուածին տրամադրութեանց համաձայն պատրաստել տալ գոնէ եօթն արժանաւոր ընտրելիաց անուն պարունակող ներկայացման նոր ցուցակ մը, և ընդ փոխ ուղարկել զայն ի Պատրիարքարան, որպէսզի կարելի ըլլայ նոյն Յունվար 31էն սկսեալ առ առաւելն եռամսեայ միջոցին մէջ կատարել Պատրիարքական ընտրութիւնը:

Այլ սակայն Տ. Դանիէլ Սրբազան փետր. 24 թուականաւ պատասխանագրով նախ կը պարզէր իր Երուսաղէմ ժամանելէն ի վեր որ է 1909 Դեկտ. 17, Միաբանութեան մէջ ծագած անցուդարձերը, և 1910 Հոկտ.ին Տ. Յարութիւն Ս.ի վախճանումէն ետքը՝ ընտրելիաց ցանկին պատրաստութեան ձեռնարկելը, Միաբանութեան մէջ տիրող տրամադրութեանէն դատելով, կ'նկատէր որ բնականօրէն չ'իստատանար, և կ'յարէր թէ շատ հաւանականութեամբ թերեւս այս առթիւ միաբանութեան մէջ նոր երկպառակութիւնք ծագի, և ցաւալի դէպքեր ալ պատահին, և կարծիք կ'յայտնէր որ՝

Ա. — Եթէ կարելի է արդէն զրկուած ցանկին վրայ կատարուի ընտրութիւնը:

Բ. — Եթէ Գէորգ Նպիսկոպ. ին վախճանմամբ ցանկը դարձեալ եօթնանունի վերածել օրինաւոր կ'նկատուի, եօթնէն յետոյ առաւել լագոյն քուէ ստացող ութերորդին անունն անցուի ցանկին մէջ, և կամ:

Գ. — Եթէ ուղուի որ այդ մէկին ալ ընտրութիւնն միաբանութիւնն կատարէ, եօթնէն յետոյ առաւելագոյն քուէ առնողներէն, որոնց ցանկը՝ արդէն զրկուած է, համեմատականի օրէնքով երկու կամ երեք անուն զրկուի, և յանձնարարութիւն որ անոնցմէ մէկն ընտրուի ու տեղեկագրուի:

Տ. Դանիէլ Ս. կ'յաւելուր նաև որ եթէ Ազգ. վարչութիւնն պնդէ իր հրահանգին կէտ առ կէտ գործադրութեան մասին, ինքն զրգադարար հզօր պատճառներով չ'պիտի կրնայ ձեռնարկել ընտրութեան գործին, և կեղբոնին կ'մնայ այս մասին հարկ եղածն անօրինել:

Սառն Ժողովը սոյն գիրն ուղարկութեան առնելով զիտեց թէ պարզուած ահաութիւններս լով անձնական կարծիքներն էին Տ. Դանիէլ Ս.ի, առանց միաբանական Ընդհ. Ժողովը ի նիստ գումարելու և անոր յանձնարելու վարչական հրահանգին գործադրութիւնը, և նկատելով որ եղած առաջարկները հիմնուած չ'էին կանոնական պայմաններու վրայ, որով կ'հակասէին նաև վարչութեան անօրէնութեան՝ որ մանաւանդ Ազգ. Ժողովէն նուիրադործուած՝ վերջնական հանգամանք ստացած էին, և վերջապէս նկատելով որ Նորին Սրբազնութեան տեղապահի հանգամանքովը բուն պաշտօնն է կատարել տալ ներկայացման ցուցակին պատրաստութիւնը, և տեղի չկար այս մասին տարբեր անօրինութեան, քանի որ ցուցակի պատրաստութիւնը պարզ գործովութիւն մ'է որ պիտի կատարուի քուէարկութեամբ, և իւրաքանչիւր միաբան արդէն ըստ օրինի ազատօրէն քուէարկելու իր իրաւունքը կը վայելէ, հետեւաբար որոշեց կրկնել նախորդ հրահանգին անփոփոխ գործադրութիւնը, և իւր այս անօրինութիւնն հեռագրեց Մարտ 13ին:

Այս հեռագրէն յետոյ, վարչութիւնն ըստացաւ Տ. Դանիէլ Սրբազանի Մարտ 10 թուականաւ մէկ գրութեան հետ միաբանական Ընդհ. Ժողովոյ նոյն թուականաւ մէկ տե-

զեկագիրն՝ որով կը յայտնուէր թէ՛ վարչութեան որոշումն դառն ապաւորութիւն մը գործած է միաբանութեան վրայ. և զիտեղ կը տրուէր թէ՛ երբ 1910 տարուոյ Փետրվարի սկիզբը Պատրիարքական Տեղապահը լիազօր պատուիրակ Պարզե ֆափազեան էֆ.ի հետ ձեռնարկած է պաշտօնի, ընդհանուր ներում չնորհուած է անցելոյն մէջ ո՛ր և է կերպով թերացողներուն, և բոլոր միաբան եկեղեցականաց՝ ըստ յարմարութեան պաշտօններ յանձնուած են. բայց ի այդ, ժամանակին վառ. քէն հեռացուցուած կրեք վարդապետներէն, և այդ թուականին այժմ ամբաստանեալ նրկատուած Տ. Վահան Վրդ.ի՝ պաշտօնի փոփոխութեամբ, յանձնուած է Բեթղեհեմի վանքին տեսչութիւնը, և այժմ ալ թէ անդամ է Տնօրէն Ժողովոյ և թէ Աւագ Թարգման Տ. Հմայեակ Վրդ.ի յանձնուած է Դամասկոսի հոգեւոր հովութիւնը, և վերջէն ալ կոչուած է Տնօրէն Ժողովոյ անդամակցութեան:

Այս վիճակին մէջ՝ 1910 Հոկ. 18ին, Տ. Յարութիւն Սրբազան վախճանելով. անոր յաջորդին ընտրութեան առթիւ կեդրոնէն լիազօր հանգամանքով և որոշ հրահանգով Երուսաղէմ զրկուած է Հայկ Էֆէնտի Խօճասարեան ընտրական գործողութեանց և այս առթիւ օրինաց տրամադրութեան ճշգրիտ գործադրութեան հսկելու համար 1911 Մայ. 22ին, Տեղապահ Սրբազանի նախագահութեամբ գումարուած միաբանական Ընդհ. Ժողովոյ չորրորդ և հինգերորդ նիստերու մէջ Խօճասարեան էֆէնտի ի դիմաց Ազգին պաշտօնապէս յայտարարած է թէ՛ բացի Պոլիս կոչուած երեք վարդապետներէն, և հաշուական խնդրով Պոլիս գտնուող Տ. Ղեւոնդ Վրդ. Մաքսուտեանէ, միաբանական ախտի մնացեալ բոլոր անդամները կը վայելին ընտրողութեան և ընտրելիութեան բացարձակ իրաւունքը, և ըստ այնմ նոյն և յաջորդ Երդ. նիստերուն մէջ գաղտնի քուէարկութեամբ, և օրինաց բացորոշ տրամադրութեանց համաձայն պատրաստուած են ընտրելիաց եօթնասուն և եռասուն ցանկերը, և Ազգ. պատուիրակին ստորագրութեամբ մատուցած են կիզրոնի: Ուրեմն հաստատուած այս գործողութեանց ընթացքէն կը հետեւի որ՝ Վարչ. Պատուիրակն ալ ամբաստանեալի ու է հանգամանք մատնանշած չ'է Տ. Վահան և Տ.

Հմայեակ վարդապետներու, և թէ անոնց ընտրելիութեան դէժ ո՛ր և է զիտողութիւն չընելով հանդերձ՝ իր ներկայութեան ալ նոյն կրկու վարդապետներն ընտրուած են անդամ Տնօրէն Ժողովոյ, և այս կերպով ալ հաստատուած է անոնց Պատրիարքական ընտրելիութեան հանգամանքը:

Այս բացատրութիւններով միաբանական Ընդհ. Ժողովը կ'եզրակացնէր որ՝ Ազգ. Վարչութիւնն եթէ ընտրելիներու վրայ օրինաց տրամադրութեանց հակառակ որ և է հանգամանք կը նկատէր, ժամանակին իւր զիտողութիւնն պէտք էր ընէր, և թէ Տ. Գէորգ Եպս.ի վախճանումը զօրաւոր պատճառ մը չկրնար ըլլալ, նոր ցուցակի պատրաստութեան հարկը չհշտելու, և թէ՛ ընտրելիաց ցանկի մէջ գտնուող յիշուած երեք վարդապետներու վրայ վերստին ծանրացող ամբաստանութեան պարագան խորին սրտաբեկութիւն պատճառած է միաբանութեան, և կը խնդրէր՝ միաբանութեան միահամուռ բաղձանաց համեմատ, ընդ փոյթ կատարել Ս. Աթուռի գահակալին ընտրութիւնը, Տ. Գէորգ Սրբազանի վախճանումով վեցանունի վերածուած ընտրելիաց ցանկին վրայ:

Այս տեղեկագրին վրայ Խառն Ժողովը կրկին ուշադրութեան առաւ խնդիրն և զիտեց թէ՛ նախորդ ցուցակին թէ՛ և բեկանման պատճառ համարուած է նաեւ յիշեալ երեք վարդապետներու նոյն ցուցակին մէջ իրեւ ընտրելի զեղեղուած ըլլալն, քանի որ անոնք բմբոստութեան արարքին պարագլուխներն եղած էին, Պատրիարքական Տեղապահին պաշտօնի ձեռնարկելու միջոցին, արարք մը՝ որ ապացուցուած էր ժամանակին վարչութեան հասած տեղեկագրերով. իսկ անոնց ներման արժանացած ըլլալու պարագան հաստատուած և նուիրագործուած չէ պատրիարքարանի արձանագրութիւններով, և նկատելով միւս կողմանէ որ՝ թէպէտ և յիշեալ միաբաններն ըստ օրինի դատաստանի տակ առնուած և վերջապէս դատապարտուած չեն, սակայն, վարչութեանն ալ իւր այս անգամուան հրահանգով զանոնք ընտրելիութենէ բացարձակապէս զրկելու անօրինութիւն մ'ըրած չէ, այլ ընդհակառակն 13 Մարտի հեռագրով՝ հիմնուելով օրէնսդրական ընդհ. սկզբունքին վրայ՝ քուէարկութեան ազատութիւնն մատ-

նանշած է, հետեւաբար՝ Խառն Ժողովն անընդունելի դատեց միաբանութեան տեղեկագրով պարզուած տեսութիւններն, և առաջարկը, օրէնքի հակառակ նկատելով զանոնք. Մարտի 20ին հեռագրով մը կրկնեց նախորդ հրահանգը, և յանձնարարեց գործադրել զայն սուանց ձգձգումի:

Այս երկրորդ հեռագրին ի պատասխանի հասաւ Մարտ 29 թուականու հեռագիր մը՝ ստորագրեալ թէ՛ Տ. Դանիէլ Սրբազանէ և թէ՛ Ընդհ. Ժողովոյ Բ. Ատենապետ Տ. Եղիշէ Եպս.է, որով կը ծանուցուէր թէ՛ Խառն Ժողով Մարտ 20ի հեռագրին վրայ միտք Ընդհ. Ժողովը վերստին ի նիստ հրաւիրած են, ուր նկատի առնուած է թէ՛ Պատր. ընտրութիւնը միաբանական կանոնագրի համաձայն, և Ազգ. կեդր. վարչութեան պատուիրակի ներկայութեան կատարուած է, և անկէ ի վեր 1¹/₂ տարի անցած է, թէ՛ ընտրելիաց ցուցակի պատրաստութիւնը միտք Ընդհ. Ժողովոյ իրաւասութեան պատկանելով, նոյն ցուցակը վաւերացուած է Երէցեան Սրբազանի տեղ Տ. Գրիգորիս Վրդ.ի անունը աւելցուելով, և թէ Խառն Ժողովոյ կողմէ ընտրական գործողութիւնն առ ոչինչ համարելով՝ նոր ընտրելիաց ցանկի մը պատրաստութեան վրայ պնդելն վանքին իրաւանց դէմ է, հետեւաբար, միաբանական Ընդհ. Ժողովը մեծամասնութեամբ մերժելով եղած պահանջումը, որոշած է խնդրել որ վեց հոգիէ բաղկացած ցանկին վրայ մէկը աւելցուի:

Այս պատասխանին ինքնին կը բաւէ արտայայտելու միաբանութեան տրամադրութիւնն վարչական որոշմանց հանդէպ, և զիտուելով որ ցոյց տրուած գովաւակութիւնն օրինաց հակառակ է, արժան դատուեցաւ մասնաւոր պատուիրակի մը միջոցաւ լուսաբանել թիւրիմացութիւններն, և բառնալ նախապաշարութիւնները, և իբրեւ վերջին միջոց՝ փորձ մ'ալ ընել միաբանութիւնն համոզելու, Պատ. Ժողովոյը որոշման համաձայն կազմել տալու պատրիարքական ընտրելիաց նոր ցանկը, անգամ մ'եւս չհշտելով միաբանութեան քուէի ազատութիւնը, ինչպէս Մարտ 13ին ալ հեռագրուած էր: Հետեւաբար՝ օգտուելով Ազգ. Երեսփոխան Ազն. Պարզե ֆափազեան էֆ.ի Եփպատոս գտնուելէն, որ արդէն զիտակ էր խնդրոյն, և Երուսաղէմայ հանգամանաց,

հեռագրուեցաւ իրեն՝ վերադարձին ուղեւորիլ Երուսաղէմ, և ըստ այսմ ի գործ դնել կարեւորն, ինչպէս նաեւ ծանուցուեցաւ այս տընօրէնութիւնն Պատրիարք. Տեղապահ Տ. Դանիէլ Սրբազանի:

Եւ մինչդեռ Ազգ. Վարչութիւնն կը յուսար որ այս անօրէնութեամբ ամէն կնճիռ պիտի հարթուէր և խնդիրն ստանար իւր օրինաւոր ուղղութիւնը, դժբախտաբար մեծ իրնաւոր ուղղութիւնը, դժբախտաբար մեծ եղաւ իւր յուսախաբութիւնն, երբ Պարզե էֆ. Եաֆայէն Ապր. 22ին և 23ին կը հեռագրէր թէ՛ տրուած հրահանգին համեմատ եգիպտոսէն մեկնելով Երուսաղէմ, միաբանական Ընդհանուր Ժողովը գումարած, և բացատրած է իւր պաշտօնին նպատակը: Բայց, հակառակ իւր հեղահամարը և օրինաւոր ընթացքին, նախատուած, խստութեանց ենթարկուած և կոպտութեամբ ծեծուած է Ժողովին մէջ, և մոռնաւ անդ կանխաձրածութեամբ Ատենապետ Տ. Եղիշէ Եպ.ի, և Տ. Եղիա, Սամուէլ, Թովմատ և Հմայեակ Վարդապետներու: Հազիւ անձն ազատած՝ իջած է Եաֆա, Աղեքսանդրիոյ ճամբով Պոլիս գալու համար, և թէ Պատրիարք. Տեղապահ Սրբազանը կեդրոնի օրինաւոր որոշմանը ոյժ տալ ուղեւորն պատճառաւ նոյնպէս խստութեանց ենթարկուած և անարգուած է, և նաեւ թէ՛ ծանր նախատիքներ եղած են Ազգ. Ընդհ. և Խառն Ժողովոյ դէմ, կը խնդրէր խիստ պատիժ անօրինիլ, կը ծանուցանէր միանգամայն թէ՛ իւր պաշտօնէն ձրգուած է Տ. Դանիէլ Սրբազան, և չէզոքացուցուած է ապստամբող միաբանութեան կողմէ, նոյն իսկ անկարող է հեռագրելու, և թէ վիճակն անձկալի լինելով՝ կը խնդրէր զգուշանալ միաբանութեան տեղեկութիւններէն:

Իսկ միաբանութեան Ընդհ. Ժողովոյ Բ. Ատենապետ Տ. Եղիշէ Եպս. և թուով 14 ուրիշ անդամներ Ապրիլ 22ին կը հեռագրէին թէ՛ Պարզե էֆէնտի Երուսաղէմ համոզելուն՝ եղած հրահանգին վրայ միաբանական Ընդհ. Ժողովը ի նիստ գումարուած է, և խորհրդակցութեանց միջոցին Պարզե էֆէնտի խօսքը վերջացունելէ յետոյ՝ իւր Ժողովին Բ. Ատենապետը Աթուռ թողովով Ժողովականաց կարգն անցած և ուղած է տեղեկութիւն և բացատրութիւն տալ, Փափազեան էֆէնտի ըստ պաշտօնիքներ ըրած է թէ՛ խօսելու իրաւունք

և իրաւասութիւնն չունի, և երբեք չպիտի լսէ, և այսպիսի խօսքերով ժողովրդն առաւել և ցրուելուն պատճառ եղած է, և յաւելով որ միաբանական Ընդհ. ժողովն Պատրիարքական ընտրութեան մասին իւր վերջնական որոշումն տուած է, կը խնդրէին հետաքննել Պարզեւ Էֆէնտին:

Այս գայթակղութեանց վրայ՝ վարչութիւնն անմիջապէս նկատի առաւ իրաց ծանր կացութիւնն, և մանաւանդ Ազգ. իշխանութեան հեղինակութիւնն բարձր պահելու անհրաժեշտ պարագան, և սակայն առ այդ միջոցներ ձեռք առնելէ առաջ՝ նախ Տեղապահ Սրբազանէն տեղեկութիւն ուղեց վանքին վիճակին, և պատահած անցքերուն վրայ, և Ապրիլ 25ին ստացաւ Եւֆայէն անոր 24 թուականաւ մէկ հեռագիրն, որով Ն. Սրբազանութիւնը կը հաստատէր Պարզեւ Փափազեան Էֆի հեռագրերուն պարունակութիւնը, և կը յաւելուր թէ՛ յիշեալ Էֆէնտին՝ հեռագրով իր մասնանշած վարդապետներէն նախատուած և ծեծուած է, միաբանական Ընդհ. ժողովոյ մէջ, Ասիէ զատ՝ ժողովակաւնաց մեծամասնութիւնն ասով ալ չգոհանալով՝ զինքն ստիպած է պաշտօնէ հրաժարելու, և ի դորձ դրուած ճնշման տակ տուած է հրաժարականը, թէ օրէնքի հակառակ՝ ժողովն վերստին գումարելով իրեն տեղ Տ. Տրդատ Եպս. Տեղապահ ընտրած է, յաւելով որ ինքն Սրբազանէն մէջ յարաբերութենէ զըրկուած ըլլալուն՝ անկէ չէ կրցած պատասխան գրել, և միայն երէկ Եւֆայ կրցած էր գալ և հրահանգ կը խնդրէր:

Յանուն միաբանական Ընդհ. ժողովոյ՝ 2 իշխիկիւն Եղիշէ Եպս. Է եկած Ապր. 24 թուականաւ հեռագրով ալ ծանուցուելով թէ՛ Տեղապահ Դանիէլ Սրբազանի առաջնական պատճառաւ հրաժարման վրայ՝ Տրդատ Եպս. Տեղապահ ընտրուած է, կը խնդրուէր անոր պաշտօնին վաւերացումն:

Դժբախտաբար, այլևս խնդիր չէր մնար պատահած այս ցաւալի անցքերուն իրականութեան և կատարուած գործողութեանց ապօրինութեան վրայ, և ամենէն անմիջականն էր Ազգ. իշխանութեան հեղինակութեան վերահաստատութիւնն Ս. Աթոռին մէջ: Ուստի Ազգ. Վարչութիւնն Ապր. 26ին նախ ըսկզբամբ որոշեց եկեղեցական և աշխարհա-

կաններէ բաղկացեալ պատուիրակութիւն մը ղրկել Սրբազանէն, և էսր անմիջական դարձան՝ Ա. պահպանելու համար Պատրիարք. Տեղապահին դիրքը, դիմեց Սրբազանութեան գործոց նախարարութեան, և պարզելով իրաց վիճակը, խնդրեց որ Սրբազանէն կաւաւորէին պէտք եղած հրահանգներն տրուին՝ օժանդակելու համար Պատրիարքական Տեղապահին՝ իւր պաշտօնին մէջ, և գործադրելու համար անոր դիմումները:

Բ. — Հեռագրեց Տ. Դանիէլ Սրբազանի թէ՛ իւր ճշման ներքեւ տուած հրաժարականին մերժումը կամ ընդունելութիւնը կը պատկանի Ազգային Ընդհ. ժողովոյ, և մինչև որ այդ մասին որոշում մը տրուի, իւր պաշտօնէն ձեռնաթափ չըլլայ, այլ մինչև ցնոր անօրինութիւն Եւֆայի մէջ սպասէ հրահանգի:

Գ. — Հեռագրեց Սրբազանէն միաբանական Ընդհ. ժողովին որ Ազգին ներկայ տագնապալի կացութեան մէջ, միաբանութեան կողմէ երկպառակութեան տեղի տուող ընթացքի մէջ գտնուել հակառակ է Ազգային զգացմանց և կրօնական պարտաւորութեանց, և թէ՛ Տեղապահ Սրբազանը կը պահէ իւր պաշտօնը, և Ազգ. ժողովին անկ է անոր հրաժարականն ընդունել կամ մերժել:

Այս անօրինութեանց համաձայն՝ յիշեալ նախարարութեան կողմէ եղած յանձնարարութիւն արդէն եղած ըլլալով Սրբազանէն կաւաւորելութեան, Տ. Դանիէլ Սրբազան Ապր. 27ին հեռագրած է թէ կը մնայ Եւֆայ, ըստ պատկերով Պատ. ժողովի որոշման:

Իսկ Ապր. 30 թուականաւ հեռագրով կը ծանուցանէ թէ այն պարագային երբ իւր հրաժարականը մերժուի, հարկ է որ վերջին անկարգութեանց պարագայներն հեռացուցուին վանքէն, որպէս զի կարենայ իւր պաշտօն վերստանանք. բայց եթէ իւր այս առաջարկը չընդունուի, այն ատեն իւր հրաժարականը վերջնական պէտք է համարուի:

Արդ, ինչպէս Պատ. ժողովը կը տեսնէ, ցորչափ կ'ուզուի Սրբազանէն մէջ գործերն իրենց օրինաւոր ընթացքին վերածել, ընդհակառակն անհարկի խոչնդոտներն, չին դադարի գոյութենէ, և ըստ որում թէ Պատրիարքական ընտրելեաց նոր ցանկին պատրաստութեան անօրինութեան նուիրագործումն և թէ

Պատրիարքական Տեղապահի պաշտօնն բըղխած են պատ. ժողովէր, Ազգ. Վարչութիւնն՝ ընդ գրոյս մատուցանելով Սրբազանէն միաբանական Ընդհ. ժողովոյ մէկ տեղեկագիրը՝ նոր ցուցակ պատրաստելու խնդրոյն նկատմամբ, կը փութայ խնդիրն իւր բոլոր պարագաներով յայտագրել Պատ. ժողովոյը և կը յանձնէ իւր վերին անօրինութեան:

Մնամբ Յարգանք

Դիւան Կրօնական ժողովոյ

Ատենադպիր Վ. Ասենապետ
Գ. Ծ. Վ. ՊԱՆԱՅԵԱՆ ՎԱՀԱՆ Ծ. Վ. ՅԱԿՈԲԵԱՆ

Դիւան Քաղաք. ժողովոյ

Դեր Ատենադպիր Ատենապետ
Ա. Յ. ԳԱՍՊԱՐԵԱՆ Ս. ԳԱՐԱԵԱՆ

Վսեմաշուք Ատենապետ Էֆէնտի

Ազգային Երեսփ. Ընդհ. ժողովոյ

Պատկանելի ժողովը 1912 տարւոյ Յուլիս 16 թուականաւ պաշտօնագրով ծանուցանելով թէ նկատողութեան առնելով Սրբազանէն միաբանական կանոնագրին երեւոյթական և մատակարարութեան գործոց վերաբերեալ 31, 32, 37, 41, 50, 51, 57, և 85րդ յօդուածներու մասին նախաձեռնութեան Դիւանի կողմէ կատարուած փոփոխութիւնները, մէկ քանի բարեփոխութիւններով ընդունած և որոշած է գործադրութիւնը, և յաւելուածաւ կան յօդուածով մը Սրբազանէն երեւոյթական գործին վերին հսկողութիւնը յանձնած է Ազգային Կեդր. Վարչութեան, և ներկայեալ կ'ուղարկէր Ազգային ժողովէն ընդունուած բարեփոխեալ յօդուածներու մէկ օրինակն, սահմանեալ արամադրութեանց համաձայն հսկողութեան իրաւունքն ի գործ դնելու, և ի նորոյ ընտրելի Ս. Սրբազանէն Ս. Պատրիարքին ուխտը այդ բարեփոխմանց համեմատ կատարել տալու համար: Այսու հանդերձ՝ Պատ. Դիւանը կը յարէր նաև թէ՛ Սրբազանէն վանքը՝ միաբանութեան ներքին

կանոնագրին արամադրութեան համեմատ պարտաւոր ըլլալով իր տարեկան պիւտճէն ներկայացնել և վաւերացնել տալ Ազգային ժողովոյ, վերջին անգամ տեղի ունեցած կանոնագրի բարեփոխութեանց առթիւ, որոշուած է նաև յանձնարարել միաբանութեան որ տարեկան պիւտճէն կանոնաւորապէս ներկայացնէ Ազգային Վարչութեան և Ազգային ժողովոյ, հետեւելով միանգամայն ընդհանուր կանոնի, որ կը արամադրէ մինչև նորին վաւերացումն, հինգ գործադրել անթերի:

Ազգային Վարչութիւնն այս խնդիրն ալ կը ժառանգէր իր նախորդէն, և փափաքելով Ս. Սրբազանէն Աթոռին երեւոյթական գործառնութիւններն օր առաջ օրինաւոր անտեսութեամբ հիմնապէս բարեկարգել, ձեռք առաւ խնդիրը, և ինչպէս իր նախորդն՝ նոյնպէս և ինքն նկատելով որ այս բարեկարգութեան գործն յարատեւ աշխատութեան և խընամբի կը կարօտի, մինչդեռ վարչութիւնն արդէն կարի ծանրաբեռնեալ, այս հսկողութիւնն ու հակակշիռն ալ՝ իրենց բարդ հանգամանքներով չպիտի կրնայ ինքն անձամբ կատարեալ ըստ արժանւոյն, պատշաճ դատեց յանձնարարեալ այս աշխատութիւնը ուրոյն մարմնոյ մը յանձնել «Սրբազանէն երեւոյթական Յանձնաժողով» անուամբ, և հինգ անդամներէ բաղկացեալ, և անոր պաշտօնն սահմանեց՝ հետեւողութեամբ բարեփոխեալ յօդուածներու արամադրութեանց, իրեն հաշուակալութեան ատեան (տիվանը մուհասէպաթ) որպէս զի յանուն Ազգային Վարչութեան ի գործ դնէ վերին հսկողութեան իրաւունքը, և յետեւողութեան միայնուն երմադէտ ներկայացուցչի մը ձեռամբ հակակշիռ վանքին ըստ օրինի վաւերանալի տարեկան պիւտճէի գործադրութիւնը վիզի դրութեամբ, և այս կերպով կանոնաւոր մատակարարութիւն հաստատէ, պարտուց բարձման հոգ տանի, և առ այդ միջոցներ հայթայթելով վարչութեան հաւանութեամբ գործողութեան կարեւորը:

Հետեւաբար՝ այս կարգադրութեամբ Ազգային Վարչութեան խառն ժողովն կազմակերպեց երեւոյթական Յանձնաժողովն, որ թէ և մասնակի հրաժարմանց պատճառաւ չկրցուցարդ ձեռնարկել ի գործ, այլ սակայն վերջերս հրաժարեալներու տեղ նոր անդամներ ընտրեց:

Յաւալի է արդարեւ որ մինչդեռ պատկառելի ժողովի եւ Ազգային Վարչութիւնն անհամբեր կ'սպասեն որ առաջ տեսնել Ս. Ա. Թումին բարեկարգութիւնն եւ ելմտական գործողութեանց օրինաւորութիւնն, միաբանութիւնն Պատրիարքական ընտրելիաց ցանկին ի նորոյ պատրաստութեան մասին իրեն եղած յանձնարարութեան առթիւ կ'ընդվզի նաեւ այս տնօրէնութեան դէմ, եւ միաբանական ընդհանուր ժողովն Մարտ 15 թուականաւ զրով մը կը ծանուցանէ թէ խորհրդակցութեան առարկայ ըրած է 1888ի կանոնադրին վրայ Ազգային Ժողովի կողմէ կատարուած եւ գործադրութեան յանձնուած մասնակի փոփոխութեանց պարագան եւ դիտել կուտար թէ կանոնադրին վերաքննութիւնն ու փոփոխութիւնն իրեն վերապահուած է, ցարք գործադրութեան մէջ եղող 1888ի կանոնադրին 85րդ. յօդուածին տրամադրութեանց համաձայն, եւ յայտնելով թէ՝ առանց նախապէս իր տեսակէտը չօչափելու կատարուած ու գործադրութեան յանձնուած մասնակի փոփոխութեամբ անտեսուած են Ազգէն նուիրագործուած միաբանութեան իրաւունքները, կը յաւելու թէ փոփոխութեան ենթարկուած կանոնադրի գործադրութիւնը ակնկալուած արդիւնքն եւ օգտակարութիւնը չպիտի ունենայ, եւ կը խնդրէ լսել այս մասին միաբանութեան կարծիքն ու տեսակէտը:

Այս առարկութիւնն ձեւականօրէն թէպէտեւ պաշտպանելի եւ սակայն զուրկ է բանաւոր հիմէ, վասն զի տարիներէ ի վեր հաստատուած իրողութիւն մ'է Ս. Ա. Թումին ելեւմտական ախուր վիճակն որ հետզհետէ կ'սպառնայ անոր իսպառապուտ աւերմանը, եւ մանաւանդ Ազգային Ժողովէն կատարուած մասնակի վերաքննութիւնը բացառիկ կացութեան մը ըլլանական հետեւանքն էր:

Արդ՝ որովհետեւ այս պայմաններու ներքեւ հնարաւոր չ'է հակադէպ իրաւունքն ի գործ դնել եւ ձեռնարկուած միջոցներն յառաջ տանիլ անխափան, Սառն Ժողովն հարկ գաւեց նախ պատկառելի ժողովի յայտադրել իրաց արդի կացութիւնն եւ անոր հրահանգաց համաձայն չարժիլ, ի նկատի ունենալով որ իրեն օրէնսդիր մարմինն Ազգային Ժողովի անկէ հարկ եղած վճար տալ, Երուսաղէմի

միաբանութեան ներքեակ տեղեկագրով յարուցած վերոյիշեալ առարկութեանց նկատմամբ:

Մնանք Յարգանք

Դիւան Կրօնական Ժողով

Աստեղագիր Վ. Աստեղագիր
Գ. Ծ. Վ. ՊԱԼԱՔԵԱՆ ՎԱՀԱՆ Ծ. Վ. ՅԱԿՈԲԵԱՆ

Դիւան Քաղաք. Ժողովոյ

Դեր Աստեղագիր Աստեղագիր
Ա. Յ. ԳԱՍՊԱՐԵԱՆ Ս. ԳԱՐԱԵԱՆ

Ամենապատիւ

Տ. Յովհաննէս Սրբազան Արքեպ. Արշարունի Բարեխնամ Պատրիարք Հայոց Թուրքիոյ, եւ նախագահ Ազգ. Պատկ. Երեսփ. Ժողովոյ

Ի Կ. Պոլիս

Ամսոյս 4ի երկուշաբթի օր գումարուած Միաբանական Ընդհանուր Ժողովոյն մէջ խորհրդակցութեան առարկայ եղան Ձերդ Բարձր Սրբազնութեան Փետրուար 11 թուով եւ 144 համարաւ պաշտօնադրին մէջ յիշուած Միաբանական 1888ի կանոնադրին վրայ Ազգային Կեդր. իշխանութեան կողմէ կատարուած եւ գործադրութեան յանձնուած մասնակի փոփոխութեան պարագայն:

Միաբանական Ընդհանուր Ժողովը խորհրդարար կուգայ դիտել տալ առ այդ, թէ կանոնադրի վերաքննութիւնն ու փոփոխութիւնն իրեն վերապահուած է. համաձայն Ազգային Երեսփոխանական Ժողովէն վաւերացուած եւ ի գործադրութեան եղող, 1888ի կանոնադրի 85րդ. յօդուածի հետեւեալ տրամադրութեան. «Վերաքննութիւնը կը կատարուի Միաբանական Ընդհանուր Ժողովով եւ կը մատուցուի Ազգային Երեսփոխանական Ժողովոյն ի վաւերացումն.» Ուստի Միաբանական Ընդհանուր Ժողովը ցաւելով կը հարկադրուի յայտնել թէ. առանց նախապէս իր տեսակէտը չօչափուելու կատարուած եւ գործադրութեան յանձնուած մասնակի փոփոխութեամբ անտեսուած կը նկատէ Ազգէն

նուիրագործուած իւր իրաւունքները: Բաց աստի, Միաբանութիւնը կը տարակուսի նաեւ որ՝ փոփոխութեան ենթարկուած կանոնադրի գործադրութիւնը ակնկալուած արդիւնքն ու օգտակարութիւնը ունենայ. քանի որ ինք, աւելի մօտէն գիտակ ըլլալով տեղական հանգամանաց եւ միաբանական պահանջներու, կը կարծէ թէ աւելի նպատակարար մար պիտի ըլլար, եթէ կանոնադրի մասնակի փոփոխութեան առաջ Ազգային Կեդր. Պատկ. իշխանութիւնը բարեհաճէր չօչափելու Միաբանութեան կարծիքն ու տեսակէտը առ այդ:

Արդ, Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր, Միաբանական Ընդհանուր Ժողովոյն այն տեսութիւնն ալ իր կարգին խոնարհա-

բար ներկայացնելով Ձերդ Ամենապատկառելի եւ Ազգային Պատկառելի Երեսփոխանական Ժողովոյն բարձր նկատմամբ, կը մատուցանենք մեր խորին յարգանաց հաւատարմութիւնը:

Յիսուսաւանդ ողջունելու

Մնամք խոնարհ Աղօթակիցք

Ի զիմաց Միաբանական Ընդհ. Ժողովոյ
Պատրիարքական Տեղապահ եւ Նախագահ
ԴԱՆԻԷԼ ԱՐՔԵՊ. ՅԱԿՈԲԵԱՆ

Ասեմապետ

ԵՂԻՇԷ ԵՊՍԿՈՊ. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ



(Գ. Վիճակ)

Դու մ-գաբու, Դու մ գաբու ի յու ռս

69.	Դաւիթ	էֆ.	Տէր-Մովսէսեան
70.	Համբարձում	»	Պոյաճեան
71.	Սարգիս	»	Սուրն
72.			

Կէսիկ-փառա

73.	Հմայեակ	էֆ.	Ճրամեանց
74.	Յարութիւն	»	Ճանկիւնեան
75.	Յակոբ	»	Սեփիւնեան
76.	Յակոբ	»	Նշանեան
77.	Ներսէս	»	Ջաբարեան

Սամաթիա Ս. Գէորգ

78.	Գրիգոր	էֆ.	Ջօհրապ
79.	Լեւոն	»	Սաաթեան
80.	Հակոբ	»	Խօճասարեան
81.	Պարգեւ	»	Փափագեան
82.	Լեւոն	»	Սեղբոսեան
83.	Ռուբէն	»	Փափագեան
84.			

(Ե. Վիճակ)

Դու զկուճեմու կ - Ինասիէ

85.	Երուանդ	էֆ.	Խորասան
86.	Լեւոն	»	Տէմիճիպաշեան
87.	Ռուբէն	»	Ջաբարեան
88.	Ոսկան	»	Մարտիկան
89.	Կոպեռնիկ	»	Խաչատուրեան

Թօփ-գաբու

90.			
91.	Երուանդ	էֆ.	Ղալաթիա-Պէյֆօղ Օտեան
92.	Նշան	էֆ.	Նաուր-գաբու Դալլապեան
93.	Տիգրան	»	Մանուէլեան

Սամաթիա Ալթըմէրմէր

94.			
			Սկիւսար Ս. Խաչ
95.	Բարսեղ	էֆ.	Աւետիսեան
96.	Դարեգին	»	Տէմիճիպաշեան
97.	Յարութիւն	»	Շահրիկեան
98.	Վարդգէս	»	Սէրէնկիւնեան
99.	Յակոբ	»	Մինասեան

Բումէլի-ճիսար, Պոյաճը-գիւղ, Ենի-գիւղ

100.	Արքայամ	էֆ.	Տէր-Յակոբեան
------	---------	-----	--------------

ԴԱՆԱՌԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԵ

(Ա. Վիճակ)

101.	Վահան	էֆ.	Եգիպտոս Թէրէեան
102.	Յակոբ	էֆ.	Եգիպտոս Պօնտոպեան
103.	Տօթ. փաշան	էֆ.	Խարբերդ
			Կարին
104.	Սողոմոն	էֆ.	Տէր-Ազարեան
105.			Կիրիւն-Մանգըլթ

Մուս

106.	Դեղամ	էֆ.	Տէր Կարապետեան
------	-------	-----	----------------

Չմեկածագ—Չարսանագ

107.			Տապիգոն
------	--	--	---------

108.	Օննիկ	էֆ.	Չիֆթէ-Սարաֆ
------	-------	-----	-------------

(Բ. Վիճակ)

Աղբաւար

109.			Բալու
110.	Մեկուն	էֆ.	Կիւրճեան

111.	Աւետիս	էֆ.	Եփրատ ձինկիլեան
------	--------	-----	-----------------

112.	Վահան	էֆ.	Կեսաբիա Էսաեան
------	-------	-----	----------------

113.	Սարգիս	էֆ.	Հալէպ—Այնթապ Գնաճեան
------	--------	-----	----------------------

114.	Տօթ. Գրիգոր	էֆ.	Նիկոմիդիա ձէլալ
------	-------------	-----	-----------------

115.	Տօթ. Ներսէս	էֆ.	Պաղատ Թիւրեան
------	-------------	-----	---------------

116.	Սերովբէ	էֆ.	Սղերդ Նորատունկեան
------	---------	-----	--------------------

(Գ. Վիճակ)

Ակն

117.	Ատովմ	էֆ.	Երեցեան
------	-------	-----	---------

118.	Արթարի	էֆ.	Արաբկիր Սարաֆեան
------	--------	-----	------------------

119.	Սեպուհ	էֆ.	Եգիպտոս Իթիւմեան
------	--------	-----	------------------

120.	Լեւոն	էֆ.	Չմիւռնիա Տնտեսեան
------	-------	-----	-------------------

121.	Տէվլէթ	էֆ.	Հանքն Տատրեան
------	--------	-----	---------------

122.			Մալաթիա
------	--	--	---------

123.	Տիրան	էֆ.	Պանսրմա—Պալմէսիր
------	-------	-----	------------------

124.			Երկանեան
------	--	--	----------

125.	Օննիկ	էֆ.	Տէրունեան
------	-------	-----	-----------

126.	Արիստակէս	էֆ.	Ասանուր Դասպարեան
------	-----------	-----	-------------------

127.	Աղէքսանդր	էֆ.	Բաղէտ փանոսեան
------	-----------	-----	----------------

128.	Ջաբեհ	էֆ.	Կուսիմա—Ամիոն Կարա. Հիսար
------	-------	-----	---------------------------

129.			Թորապաշեան
------	--	--	------------

129. Գասպար	Պրուսս էֆ. Նեմցէ Hosoupo	Գաղափա 135. Տր. Խաչիկ	էֆ. Պօղոսեան
180.			Կօնեա
131. Տիգրան	Տիգրանակէրս էֆ. Նազաշեան	136. Բարթող	էֆ. Զօրեան
132. Դէորգ	Տիվրիկ էֆ. Մեծատուրեան	137. Գարրիէլ	էֆ. Նորատունկեան
	(Ե. Վինակ)		Մարտ - Զէյթուն
	Ամստիա - Մարգուան	138. Սմբատ	էֆ. Բիւրատ
133. Տիգրան	էֆ. Մարտիկեան		Շապին Գարահիսար
	Բաբերդ	139. Ժագ	էֆ. Սայապալեան
134. Երուանդ	էֆ. Սրմաբէշխանլըեան		Սեբասիա
		140. Տօրթ. Նազարէթ	էֆ. Տաղաւարեան

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

Ա. Ատենապետ	Գարրիէլ էֆ. Նորատունկեան	Ա. Ատենաղալիր	Հմայեակ էֆ. Աբամեանց
Բ. »	Տր. Տաղաւարեան էֆ.	Բ. »	Երուանդ էֆ. Պէյազմեան
Գ. »	Յակոբ էֆ. Պոյաճեան	Գ. »	Աղեքսանդր էֆ. Փանոսեան

Ն Ա Խ Ա Ք Ն Ն Ի Զ Դ Ի Ի Ա Ն Ք

ԶԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Տ. Հմայեակ Արքեպ. Դիմաքսեան
Բ. Արամ էֆ. Հալաճեան
Գ. Արշակ էֆ. Ալալոյաճեան

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Յակոբ էֆ. Պոյաճեան
Բ. Լեւոն էֆ. Սեղբոսեան
Գ. Հրանտ էֆ. Ասատուր

ԿԱԼՈՒԱԾՈՑ ԴԻԻԱՆ

Ա. Պենոն էֆ. Տէյիրմէնճեան
Բ. Վահան Էսայեան
Գ. Թորգոմ Պոյաճեան

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Եղուարդ էֆ. Շիրինեան
Բ. Խաչիկ Սրվաճեան
Գ. Պարգեւ էֆ. Փափազեան

ՅԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Յարութիւն էֆ. Մոստիչեան
Բ. Բարսեղ էֆ. Աւետիսեան
Գ. Նշան էֆ. Գալբաճեան

ԻՐԱԽԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Տ. Մաղարիա Արքեպ. Օրմանեան
Բ. Գարեգին էֆ. Տէմիրճիպաշեան
Գ. Մելրոն էֆ. Կիւրճեան

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Դաւիթ էֆ. Տէր-Մովսէսեան
Բ. Դէորգ էֆ. Մեծատուրեան
Գ. Հայկ էֆ. Խօճասարեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Բարթող էֆ. Զօրեան
Բ. Վահան էֆ. Թէքեան
Գ. Ռուբէն էֆ. Զարդարեան

ԵԼԵԻՄՏԻՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ԳԻՆ 1 ՂՐՈՒՇ

Սեփականութիւն Ազգ. Սնունկին, Ազգ. Ժողովոյ ծախուց յաւկայցեալ
Կը ծախուի յ'Ազգ. Խորհրդարան Ղալաթիոյ